6723

059
G 14

12002

ՐԱՏ. Զ. ԴԻԻԳԱՐՆԵՆՆՑԻ.—ԿՈՎԿ. ԳՐԱՎՃ.

# ՕՐԱՑՈՅՑ

# 1888

ՆԱՀԱՆՋ

## ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԵՒ

ԱԶԳԱՅԻՆ

ՌՅԼԷ—1337

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կազմեց

Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑ։

---

ԹԻՖԼԻՍ

Տպարան Յ. Մարտիրոսեանցի.

181
Է—115

## ԻՄ ԳՐԱԻՈՐ ՎԱՍՏԱԿՆԵՐԸ.

*1 ԱՆԵԿԴՕՏՆԵՐ, հատոր I., 1876.
*2 ԱՆԵԿԴՕՏՆԵՐ, հատ. II., 1877.
*3 ՆԱԽԱԳԱՇԱՐՄՈՒՆՔ, հ. I 1878.
4 ՓՕԼՈՒԻՄԳԵՐԻԱԼ, 1878. . . .
5 ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ Գ. տարի, Գ. տիպ. . 1881—1885.
*6 ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ Դ. տարի, Բ. տիպ. . . 1881—1885.
7 ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ, 1882 . . .
8 ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ, Բ. տարի, 1882. . . . . . . . . . .
9 ԱՆԵԿԴՕՏՆԵՐ, հատ. III. 1883.
10 ՀԱՅՈՑ Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍ. ԺՈՂ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, 1883 .
11 ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ, Ա. մ. Արշակ, 1883. . . . . . . . 1 ռ.
12 ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ, Բ. մ. Բռնատիրէլծիւ—լեւ—նէր, 1884. 1 ռ.
13 ՀԱՄԱՌՕՏ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Ա. մ. Նախագ. և ծառուած բան 1887.
14 ՕՐԱՑՈՅՑ 1888 թ. (Ընդարձակ Յաւելուածով), Բ. տարի . . . .

* Աստղ. կրող գրքերը սպառուած ։

# ՕՐԱՑՈՅՑ
# 1888
ՆԱՀԱՆՋ
ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ
ԵՒ
ԱԶԳԱՅԻՆ
ՌՅԼԷ—1337
(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կազմեց
Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑ։

ԹԻՖԼԻՍ
Տպարան Յ. Մարտիրոսեանցի։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ-ССР
им. А. Мясникяна

9459

Дозволено цензурою. Тифлисъ,
21 Іюля 1887 г.

## ՆՈՐ ՏԱՐԻ

(Լ ա մ ա ր տ ի ն)

էր, Դու ես հայր ժամանակաց և իշխան,
մք բիւրաւորք առ Քև մի օր են միայն.
ու 'ի ծայրից Քոյոց լերանց մրշտընջեան
իտես զաւուրս որ սըրացան և որ գան.
մի նըկատ՝ մինչչև եղեալ տեսանես՝
ւէ զո՛ր պըտուղ դարս հանդերձեալ երկնէ մեզ.
ղաչեմ, Տէ՛ր, զի՛նչ ինձ ձեռօք կեղակարծ
յս ածէ, ամ՝ յոյսն և երկիւղ մահացուաց.
իմոց աւուրց տարիս յանկուած յաւելեալ
ցէ՞ հիւսիւք սիրոյ շնորհաց յօրինեալ:
համբուրեցի՞ց զայն իբր ըղՔո ինչ պարգև,
թէ գոչեցից. Ի բա՛ց գնասջիր, ա՛նց զինև:

Այլք 'ի տարեաց անցին 'ի գիրկս ակաղձուն
Կուտեալ ինձ տենչ, զեղջ, արտասուս, անձկութիւն.
Խաբեպատիր սին երեւոյթս ուրուական,
Խինդ միօրեայ, հրաժեշտ անդարձ անդարձման,
Եւ դառն բերս՝ որոց կեղեւք ազազուն
Մնան 'ի սրտիս իբր ըղփոշի անկայուն։
Զոր չունէինն՝ ես 'ի նոցունց խընդրէի,
Եւ ցանգ զաւագն 'ի փախճանի կըրկնի։
Եւ իմ կալայց ակն 'ի դարուց աշխարհիս,
Հիմն 'ի յաւազ արկի եւ սերմն 'ի յալիս...

Թարգմ. Մխիթարեան Միաբանից.



## ԽԱՒԱՐՄՈՒՆՔ

Ներկայ 1888 թուականին Արեւը երեք անգամ կը խաւարի։

1) Մասնաւոր խաւարումն՝ որ կը պատահի Յունուարի 31-ին։ Սկիզբը՝ գիշերուայ 12 ժ. 25 ր., վերջը՝ 3 ժ. 52 րոպէին առաւօտեան։

2) Մասնաւոր խաւարումն, որ կը պատահի Յունիսի 27-ին։ Խաւարման ըսկիզբը՝ առաւօտեան 7 ժ. 20 ր., վերջը՝ 10 ժ. 42 ր.։

3) Մասնաւոր խաւարումն, որ կը պատահի Յուլիսի 26-ին։ Սկիզբը՝ երեկոյեան 7 ժ. 32 ր., վերջը՝ 9 ժ. 40 ր.։

Լուսինը երկու անգամ կը խաւարի։

1) Կատարեալ խաւարումն՝ Յունուարի 6-ին։ Սկիզբը՝ գիշերուայ 1 ժ, 01 ր., վերջը՝ 2 ժ. 39 ր.։

2) Կատարեալ խաւարումն՝ Յուլիսի 11-ին։ Սկիզբը՝ առաւօտեան 7 ժ. 24 ր., վերջը՝ 9 ժ. 06 ր.։

## 1888 ՆԱՀԱՆՋ ԹՈՒԱԿԱՆԻՆ

Գիր տարւոյն է . . . . . . . . . **ՓԻ.**
Եօթներեակը . . . . . . . . . **ԵՋ.**
Վերադիրը. . . . . . . . . . **ԻԷ** (27)
Տանուտէրը . . . . . . . . . **Ձուկն.** .

---

*Ցերեկուայ ու գիշերուայ տեւողութիւնը.*

| ԱՄԻՍՆԵՐ | ԺԱՄԵՐ | |
|---|---|---|
| | Ցերեկ. | Գիշեր. |
| Յունուար. . . . . . . | 10 | 14 |
| Փետրուար . . . . . . | 11 | 13 |
| Մարտ . . . . . . . . | 12 | 12 |
| Ապրիլ. . . . . . . . | 13 | 11 |
| Մայիս . . . . . . . . | 14 | 10 |
| Յունիս . . . . . . . . | 15 | 9 |
| Յուլիս . . . . . . . . | 14 | 10 |
| Օգոստոս . . . . . . . | 13 | 11 |
| Սեպտեմբեր . . . . . | 12 | 12 |
| Հոկտեմբեր . . . . . . | 11 | 13 |
| Նոյեմբեր. . . . . . . | 10 | 14 |
| Դեկտեմբեր. . . . . . | 9 | 15 |

1888 *թուականի*

## ՇԱՐԺԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ

*և նոցա միջոցները.*

| | | |
|---|---|---|
| Օր ԾՆՆԴԵԱՆ . . . . . . . . . . | | Չորեքշաբթի |
| Միջոց ուտիքը՝ 40 օր. | | — |
| Բարեկենդան Առաջաւորաց . . . | Փետրուարի | 14 |
| Օր Տեառնընդառաջի. . . . . . . . | ” | Կիրակի |
| Բուն Բարեկենդան. . . . . . . . | Մարտի | 6 |
| ԶԱՏԻԿ . . . . . . . . . . . . . | Ապրիլի | 24 |
| Օր Աւետման . . . . . . . . . . | ” | Հինգշաբթի |
| Երևման խաչ. . . . . . . . . . . | Մայիսի | 22 |
| Համբարձումն . . . . . . . . . . | Յունիսի | 2 |
| Հոգւոյգալուստ . . . . . . . . . . | ” | 12 |
| Բարեկենդան Ս. Լուսաւորչի. . . | Յուլիսի | 3 |
| Վարդավառ. . . . . . . . . . . . | ” | 31 |

| | | |
|---|---|---|
| Միջոց ուտիքը՝ մէկ շաբաթ . . . | | — |
| Ծարեկենդան Ս. Աստուածածնի. | Օգոստոսի | 7 |
| Միջոց ուտիքը՝ երեք շաբաթ. | | — |
| Խաչվերաց . . . . . . . . . . . . | Սեպտեմբերի | 11 |
| Ծարեկենդան Վարագայ Խաչի. . | „ | 18 |
| Միջոց ուտիքը՝ ութ շաբաթ | | — |
| Գիւտ Խաչի. . . . . . . . . . . . | Հոկտեմբերի | 23 |
| Ծարեկենդան Յիսնակի. . . . . . | Նոյեմբերի | 20 |
| Ծարեկենդան Ս. Յակոբայ . . . . | Դեկտեմբերի | 11 |
| Միջոց ուտիքը՝ 12 օր. | | — |
| Օր Ծարեկենդանի Ծննդեան պահոց . . . . | հինգշաբթի | |



## ԻՓԵՄԵՐՏԻԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

1888 *թուականի համար.*

Այս տարիս կը լինի շատ պարարտ և ցորենով ու այլ պտուղներով առատ: Ձմրան սկիզբը կը լինի ցուրտ՝ կարկըտով, մէջը ջերմ և վերջը բարեխառն: Գարունը մինչև Յունիս ամիսը՝ ցուրտ. ցոյց է տալիս անձրև և որոտմունք. բայց յետոյ կը պակասին աղբիւրների ջրերը, ուստի և կը կոտորուեն շատ եզներ: Դեմոկրիտոսն ասում է թէ՝ աշնանը գետերը կ'աճին և կ'առաջանան հիւանդութիւններ. աղաչենք Աստուծուն, որ մահտարաժամ չլինի: Պէտք է սակաւակեր լինել և շատ գինի խըմել. ձմրան սկզբումը կ'անձրևէ, և չափազանց շատ ձիւն կը գայ:

Այս տարի շատ կը տարածուի տենդը և ջերմութեան պատճառած այլ հիւանդութիւններ: Երևում է մեծ հարուած՝ մանաւանդ ծերերի և երեխաների մէջ. կանանց աւերումն: Այլ և այլ մարդկանց մէջ վէճեր ու կռիւներ

կը բարձրանան՝ իրանց թագաւորի դէմ: Եղբայրների ու սիրելեաց մէջ տարաձայնութիւն կ'ընկնի: Գրագէտների և վաճառականների մէջ կը տիրեն նենգութիւնք և խաբէութիւնք, որի պատճառով նոցա մեծ նեղութիւն կը պատահի: Արքունի սպասաւորներին (պաշտօնեաներին) մեծ վնաս և նեղութիւն կը լինի:

---

Բուն Զայները՝ ա՛., բ՛., գ՛., դ՛. Բուն Բարեկենդանից սկսեալ աշխարհողմեան դասինն են:

---

# ՅՈՒՆՈՒԱՐ

## 31 ՕՐ.

Բոլոր բընութիւն
Մըտած է ի քուն.
Զարթըննայ բըռնի
Ու չելլէ ոտքի,
Չէնէ գէշ կ'աճի
Բոյս ու կենդանի:
Թող անձրեաբեր
Ու թանձըր ամպեր
Իջնան երկինքէն
Երկիրը կընքէն:

Օ | Լ

---

*1 Ուրբ. տէ. գ. օր պահոց Ծընընդեան. — Տարեմուտ և Կաղանդ. 29

---

*) Այն տօն օրերը, երբ վարչական տեղերը և ռուսաց դպրոցների ուսանողները ազատ են պարապմունքներից, որոշուած են աստղանիշով (*):

| Օ | ՅՈՒՆՈՒԱՐ | Լ |
|---|---|---|
| 2 | Շբ. այ. դ. օր պահոց Ծննդ. —Սրբոցն Բարսղի հայրապետին և եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետին և Աբբայ Եփրեմի Խուրին Ասորւոյ: | 1 |
| | ⊛ Ծ. Լ.—Ձիւն և ցուրտ: | |
| 3 | ✢ Կիր. աէ. ե. օր պահոց Ծննդեան: | 2 |
| 4 | Բշ. բյ. զ. օր պահոց Ծննդեան. | 3 |
| 5 | ✢ Գշ. բէ. Ճրագալոյց Ծննդեան Քրիստոսի.— | 4 |
| *6 | ✢ Դշ. գյ.—Տօն ԾՆՆԴԵԱՆ և ՄԿՐՏՈՒԹԵԱՆ Տեառն.—Նոյնպէս ռուսաց. | 5 |
| 7 | ✢ Եշ. գէ. Տօն Ծննդ.—Յիշատակ Մեռելոց. | 6 |
| 8 | Ուրբ. դյ. Տօն Ծննդեան. | 7 |
| 9 | Շբ. դէ. Տօն Ծննդեան. | 8 |
| | ☽ Ա. Ք.—Փոփոխութիւն օդոց: | |
| 10 | ✢ Կիր. այ. Տօն Ծննդեան. | 9 |

| Օ | ՅՈՒՆՈՒԱՐ | Լ |
|---|---|---|
| 11 | Բշ. աէ. Տօն Ծննդեան. | 10 |
| 12 | Գշ. բյ. Տօն Ծննդեան. | 11 |
| 13 | ✢ Դշ. բէ. Տօն Անուանակոչութեան Տեառն.—Նախատօնակ | 12 |
| 14 | Եշ գյ. Տօն Ծննդեան Յովհաննու Կարապետին. | 13 |
| 15 | Ուրբ. գէ. պահք. | 14 |
| 16 | Շբ. դյ. Սրբոցն՝ Պետրոսի հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին և Աբիստղոմայ սարկաւագին. | 15 |
| 17 | ✢ Ա. Կիր. դէ. | 16 |
| | ☺ Լ. Լ.—Պարզ և ցուրտ: | |
| 18 | Բշ. այ. Սրբոյն Անտոնի ճգնաւորին. | 17 |
| 19 | Գշ. աէ. Սրբոցն՝ Թէոդոսի թագաւորին և Մանկանցն Եփեսոսի. | 18 |
| 20 | Դշ. բյ. պահք. | 19 |
| 21 | Եշ. բէ. Սրբոցն՝ Կիրակոսի և մօրն Յուղիտայի. և Գորգիոսի, Զոզիքոսի և Գրիգորիոսի. | 20 |

| Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Լ |
|---|---|---|
| | Իսահակայ, Յակոբայ, Յովսեփայ, Մովսիսի, Ահարոնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուելի, Սամփսոնի, Յեփթայեայ, Բարակայ, Գեդէոնի, և այլոց սրբոց նախահարցն. | |
| 5 | Ուրբ. բյ· պահք. | 5 |
| 6 | Շբ. բէ· Որդւոց և Թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակեսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիելի. | 6 |
| 7 | ✠ Դ. Կիր. գյ· | 7 |
| 8 | Բշ. գէ· Սրբոց Մակաբայեցւոցն՝ Եղիազարու քահանային և Շամունեայ, և եօթն որդւոց նորին. | 8 |
| | ☽ Ա. Ք.—Յրտագին խոնաւութիւն։ | |
| 9 | Գշ. դյ· Սրբոց Երկոտասան Մարգարէիցն՝ Ովսեայ, Ամովսայ, Միքիայ, Յովելեայ, Աբդիու, Նաւումայ, Ամբակումայ, Յօնանու, Սոփոնիայ, Անգիայ, Զաքարիայ և Մաղաքիայ. | 9 |
| 10 | Դշ. դէ· պահք. | 10 |
| 11 | Եշ. այ· Սրբոցն Սոփիայ և երից դստերացն՝ Պիստոսի, Ելպիսի և Ագապի. | 11 |
| 12 | Ուրբ. աէ· պահք.—Նախատօնակ. | 12 |
| 13 | Շբ. բյ· Սրբոցն՝ Թադէոսի Առաքելոյն մերոյ և Սանդխտոյ Կուսին.—Նախատօնակ. | 13 |
| 14 | ✠ Ե. Կիր. բէ· Տօն ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ԳԱԼՍՏԵԱՆ Քրիստոսի.—Տեառն ընդ Առաջ.—Բարեկենդան Առաջաւորի պահոց. | 14 |
| 15 | Բշ. գյ. պահք. | 15 |
| | ☺ Լ. Լ.—Պարզութիւն օդոց։ | |
| 16 | Գշ. գէ. պահք. | 16 |
| 17 | Դշ. դյ· պահք. | 17 |
| 18 | Եշ. դէ. պահք. | 18 |
| 19 | Ուրբ. այ· պահք. Յիշատակ | 19 |

3752 / 1008

| Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Ն |
|---|---|---|
| | Յօնանու մարգարէին. — Հանդիսաւոր օր ուխտագրնացութեան Ս. Սարգիս եկեղեցւոյն Տփխիսայ. | |
| 20 | Շբ. աէ. Սրբոցն՝ Սարգսի զօրավարին, որդւոյ նորա Մարտիրոսին և Չորեքտասան զինուորացն. — Նոյն ուխտագնացութիւն. | 20 |
| 21 | ✠ Զ. Կիր. բջ. | 21 |
| 22 | Բշ. բէ. Ատովմանց զօրավարացն.<br>☾ Վ. Ք.—Անհարթ աւուրք: | 22 |
| 23 | Գշ. գջ. Սրբոց Սուքիասեանց վկայիցն. | 23 |
| 24 | Դշ. գէ. պահք. | 24 |
| 25 | Եշ. դջ. Սրբոց Ոսկեանց քահանայիցն. | 25 |
| *26 | Ուրբ. դէ. պահք.—Ծնունդ Նորին Կայսերական Մեծութեան ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՎԻՉԻ. | 26 |
| 27 | Շբ. աջ. Տօն Սահակայ Պարթևի հայրապետին մերոյ. | 27 |

| Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Ն |
|---|---|---|
| 28 | ✠ Է. Կիր. աէ. | 28 |
| 29 | Բշ. բջ. Սրբոցն՝ Մարկոսի եպիսկոպոսին, Պիոնի քահանային, Կիւրղի և Բենիամինի սարկաւագացն. և սրբոց վկայիցն Աբդլմսեհի, Որմզդանայ և Սայենի. | 29 |

# ՄԱՐՏ

## 31 ՕՐ.

Քայլերըն Մարտին
Կաղ կը շարժին.
Բայց իր ձայնէն
Բոյս, ծառ ամէն
Եւ կենդանի
Կ'առնուն ոգի։

0 — Լ

1 * Գշ. բն· Տօն Սրբոց ՂԵ- 1
ՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ.
☻ ԾՆ. Լ.—Փոփոխական ա-
ւուրք։

*2 Դշ. գյ· պահք.—Օր Գահակա- 2
լութեան վեհափառ Կայսեր
ԱՂԵՔՍԱՆԴՐ Գ.-ի։

3 * Եշ. գն· Տօն Սրբոց ՎԱՐ- 3
ԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑՆ մե-
րոց՝ 1036 վկայիցն, որք կա-
տարեցան ի մեծ պատերազ-
մին.—Տօն ազգային.

| 0 | ՄԱՐՏ | Լ |
|---|---|---|
| *4 | Ուրբ. դյ· պահք. | 4 |
| *5 | Շբ. դն. Սրբոցն Կ. Պոլսոյ ժողովոյն՝ 150 հայրապետացն. | 5 |
| 6 | * Կիր. դն· Բուն Բարեկենդան. | 6 |
| 7 | Բշ. այ· ա. օր մեծի պահոց. | 7 |
| 8 | Գշ. ան· բ. օր մեծի պահոց. | 8 |
| | ☽ Ա. Ք.—Մրրկաբեր հողմունք։ | |
| 9 | Դշ. բյ· գ. օր մեծի պահոց. | 9 |
| 10 | Եշ. բն· դ. օր մեծի պահոց. | 10 |
| 11 | Ուրբ. գյ· ե. օր մեծի պահոց. | 11 |
| 12 | Շբ. գն· զ. օր մեծի պահոց.—Տօն Սրբոյն Թէոդորոսի Զօրավարին. | 12 |
| 13 | * Բ. Կիր. դյ· է. օր մեծի պահոց. | 13 |
| 14 | Բշ. դն· ը. օր մեծի պահոց. | 14 |
| 15 | Գշ. այ. թ. օր մեծի պահոց. | 15 |
| 16 | Դշ. ան· ժ. օր մեծի պահոց. | 16 |
| | ☺ Լ. Լ.—Խառնակութիւն օդոց։ | |

| Օ | ՄԱՐՏ | Լ |
|---|---|---|
| 17 | Եշ. բյ. ժա. օր մեծի պահոց. | 17 |
| 18 | Ուրբ. բէ. ժբ. օր մեծի պահոց. | 18 |
| 19 | Շբ. գյ. ժգ. օր մեծի պահոց. —Տօն սրբոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետին և միւս Կիւրղի եպիսկոպոսին՝ և մօրն նորա Աննայի. | 19 |
| 20 | ✱ Գ. Կիր. գէ. ժդ. օր մեծի պահոց.—Անառակին. | 20 |
| 21 | Բշ. դյ. ժե. օր մեծի պահոց. | 21 |
| 22 | Գշ. դէ. ժզ. օր մեծի պահոց. ☾ Վ. Ք.—Չարթուցթիւն օդոց: | 22 |
| 23 | Դշ. եյ. ժէ. օր մեծի պահոց. | 23 |
| 24 | Եշ. եէ. ժը. օր մեծի պահոց. | 24 |
| *25 | Ուրբ. բյ. ժթ. օր. մեծի պահոց.—Խուսաց՝ Աւետումն Ս. Աստուածածնի. | 25 |
| 26 | Շբ. բէ. ի. օր մեծի պահոց.—Սրբոյն Յօհաննու Երուսաղեմայ հայրապետին. և սրբոց հայրապետացն մերոց՝ Յօհաննու Օձնեցւոյն, Յօհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն. | 26 |
| 27 | ✱ Դ. Կիր. գյ. իա. օր մեծի պահոց.—Տնտեսին. | 27 |
| 28 | Բշ. գէ. իբ. օր մեծի պահոց. | 28 |
| 29 | Գշ. դյ. իգ. օր մեծի պահոց. | 29 |
| 30 | Դշ. դէ. իդ. օր մեծի պահոց. | 30 |
| 31 | Եշ. եյ. իե. օր մեծի պահոց. ⊛ Ծ. Լ.— Գարնանաբեր հողմունք: | 1 |

# Ա Պ Ր Ի Լ

## 30 ՕՐ.

Ա՛լ գարնան զեփիւռներ
Մեզ կուտան հրաւէր
Տուները թող տալու,
Ծաղիկներ սիրելու,
Դաշտերու, գեղերու
Ելլելու այցելու:

---

| Օ | | Ն |
|---|---|---|
| 1 | Ուրբ. ա՛ւ. իգ. օր մեծի պահոց. | 2 |
| 2 | Շբ. բ՛յ. իէ. օր մեծի պահոց. —Սրբոց Մանկանցն Քառասնից, որք ի Սեբաստիա կատարեցան. | 3 |
| 3 | ✣ Ե. Կիր. բ՛ւ. իը. օր մեծի պահոց.—Դատաւորին. | 4 |
| 4 | Բշ. գ՛յ. իթ. օր մեծի պահոց. | 5 |
| 5 | Գշ. գ՛ւ. լ. օր մեծի պահոց. | 6 |
| 6 | Դշ. դ՛յ. լա. օր մեծի պահոց. —Նախատօնակ. | 7 |
| 7 | ✣ Եշ. դ՛ւ. լբ. օր մեծի պա- | 8 |

## ԱՊՐԻԼ

| Օ | | Ն |
|---|---|---|
| | հոց.—Աւետումն Ս. Աստուածածնի. — Հանդիսաւոր օր ուխտագնացութեան Ջգրաշէնի Աւետեաց Ս. Աստուածածին եկեղեցւոյն Տփխիսայ. Թ Ա. Ք.—Պարզութիւն օդոց: | |
| 8 | Ուրբ. ա՛յ. լգ. օր մեծի պահոց.—Նախատօնակ. | 9 |
| 9 | ✣ Շբ. ա՛ւ. լդ. օր մեծի պահոց.—Տօն Սրբոյ Հօրն մերոյ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ՝ մտին 'ի վիրապն.— Հանդիսաւոր օր ուխտագնացութեան Ս. Գ. Լուսաւորիչ եկեղեցւոյն Տփխիսայ. | 10 |
| 10 | ✣ Զ. Կիր. բ՛յ. լե. օր մեծի պահոց.—Գալստեան. | 11 |
| 11 | Բշ. բ՛ւ. լզ. օր մեծի պահոց. | 12 |
| 12 | Գշ. գ՛յ. լէ. օր մեծի պահոց. | 13 |
| 13 | Դշ. գ՛ւ. լը. օր մեծի պահոց. | 14 |
| 14 | Եշ. դ՛յ. լթ. օր մեծի պահոց. | 15 |

| Օ | ԱՊՐԻԼ | Ն |
|---|---|---|
| | ☺ Լ. Լ.—Գարնանազուարթ օդք: | |
| 15 | Ուրբ. դն· խ. օր մեծի պահոց. | 16 |
| 16 | Շբ. տյ· խա. օր մեծի պահոց. —Յիշատակ Ղազարու յարութեան. | 17 |
| 17 | ✱ Կիր. տն· Ծաղկազարդ.—Յերեկոյին Դուռնբացէք. | 18 |
| 18 | Աւագ Բշ. բյ· Յիշատակ աբարչագործութեան. | 19 |
| 19 | Աւագ Գշ. բն· Յիշատակ տասըն կուսանաց. | 20 |
| 20 | Աւագ Դշ. գյ· Յիշատակ Մատնութեան Տեառն. | 21 |
| *21 | ✱ Աւագ Եշ. գն· Յիշատակ Ոտնալուային. | 22 |
| | ☾ Վ. Ք.—Ամպամած և անձրևային: | |
| *22 | Աւագ Ուրբ. դյ·.—Յիշատակ Չարչարանաց և Խաչելութեան Տեառն. | 23 |
| *23 | Աւագ Շբ. դն·.—Ճրագալոյց Զատկի. Նախատօնակ·.—Նաւակատիք. | 24 |

| Օ | ԱՊՐԻԼ | Ն |
|---|---|---|
| 24 | ✱✱ Կիր. ԶԱՏԻԿ. տյ·.—Տօն Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.—Հանդիսաւոր օր ուխտագնացութեան Նորաշէն Ս. Աստուածածին եկեղեցւոյն Տփխիսայ. | 25 |
| *25 | ✱ Բշ տն· բ. օր Զատկի.—Յիշատակ Մեռելոց.—Ուխտաշատակ Մեռելոց.—Ուխտագնացութիւն Ս. Նշան եկեղեցւոյն Տփխիսայ. | 26 |
| *26 | Գշ. բյ· գ. օր Զատկի. | 27 |
| *27 | Դշ. բն· դ. օր Զատկի. | 28 |
| *28 | Եշ. գյ· ե. օր Զատկի. | 29 |
| *29 | Ուրբ. գն· զ. օր Զատկի. | 30 |
| *30 | Շբ. դյ· է. օր Զատկի.—Յիշատակ գլխատման Սրբոյն Յովհաննու Մկրտչին. | 1 |
| | ● Ծ. Լ.—Բարեխառն օդք: | |

# ՄԱՅԻՍ

## 31 ՕՐ.

Նարկէս ու շուշան
Անցան աննըշան։
Վարդն արդ վառեցաւ,
Այրեց ամէն ցաւ։
Մայիսն ըզծաղիկ,
Ծաղիկն ըզմարդիկ
Սիրած են սաստիկ։
Մայիս, ծաղիկ, սէր,
Զըսակ են հիւսեր։

| Օ | | Լ |
|---|---|---|
| 1 | * Բ. Կիր. դկ. ը. օր Զատ-կի.—Նոր Կիւրակէ (Կրկնա-զատիկ). | 2 |
| 2 | Բշ աձ. թ. օր Յինանց. | 3 |
| 3 | Գշ. ակ. ժ. օր Յինանց. | 4 |
| 4 | Դշ. բձ. ժա. օր Յինանց. | 5 |
| 5 | Եշ. բկ. ժբ. օր. Յինանց. | 6 |
| *6 | Ուրբ. գձ. ժգ. օր Յինանց. —Ծնունդ Ն. Կ. Բ. Վսե- | 7 |



| Օ | | Լ |
|---|---|---|
| | մափառ Ժառանգին Նիկո-լայ Աղեքսանդրովիչին. | |
| 7 | Շբ. գկ. ժդ. օր Յինանց. Յ Ա. Ք.—Զովարար անձ-րեւք։ | 8 |
| 8 | * Գ. Կիր. դձ.—Կանաչ Կիւ-րակէ (Աշխարհամատրան). —Օր ուխտագնացութեան Մողնւոյ Ս. Գէորգ եկեղե-ցւոյն Տփխիսայ. | 9 |
| *9 | Բշ. դկ. ժզ. օր Յինանց.— Փ. Փոխադրութիւն նշխա-րաց Նիկողայոսի Սքանչելա-գործի. | 10 |
| 10 | Գշ. աձ. ժէ. օր Յինանց. | 11 |
| 11 | Դշ. ակ. ժը. օր Յինանց. | 12 |
| 12 | Եշ. բձ. ժթ. օր Յինանց. | 13 |
| 13 | Ուրբ. բկ. ի. օր Յինանց. ◎ Լ. Լ.—Պայծառութիւն օդոց։ | 14 |
| 14 | Շբ. գձ. իա. օր Յինանց. | 15 |
| 15 | * Դ. Կիր. գկ. Կարմիր Կիւրա-կէ. — Օր թագադրութեան Վեհափառ Կայսեր և Կայս- | 16 |

| Օ | ՄԱՅԻՍ | Լ |
|---|---|---|
| | ըուհւոյն ամենայն ռուսաց. | |
| 16 | Բշ. դյ. իգ. օր Յինանց. | 17 |
| 17 | Գշ. դէ. իդ. օր Յինանց. | 18 |
| 18 | Դշ. այ. իե. օր Յինանց. | 19 |
| 19 | Եշ. աէ. իզ. օր Յինանց. | 20 |
| 20 | Ուրբ. բյ. իէ. օր Յինանց. | 21 |
| | ☾ Վ. Ք.—Փոփոխութիւն օդոց: | |
| 21 | Շբ. բէ. իը. օր Յինանց. | 22 |
| 22 | * Ե. Կիր. կյ. Տօն Երևման Սրբոյ ԽԱՉԻՆ. | 23 |
| 23 | Բշ. կէ. լ. օր Յինանց. | 24 |
| 24 | Գշ. դյ. լա. օր Յինանց. | 25 |
| 25 | Դշ. դէ. լբ. օր Յինանց. | 26 |
| 26 | Եշ. այ. լգ. օր Յինանց. | 27 |
| 27 | Ուրբ. աէ. լդ. օր Յինանց. | 28 |
| 28 | Շբ. բյ. լե. օր Յինանց. | 29 |
| 29 | * Զ. Կիր. բէ. | 1 |
| | ◉ Տ. Լ.—Մերթ պարզ և մերթ անձրև: | |
| 30 | Բշ. կյ. լէ. օր Յինանց. | 2 |
| 31 | Գշ. կէ. լը. օր Յինանց. | 3 |

# ՅՈՒՆԻՍ

## 30 ՕՐ.

Երկինքը յըստակ,
Երկիրը խիստ տաք.
Արևը դուրսէն,
Տաքութիւն ներսէն,
Մարդուս մարմինէն
Քըրտինք կը քամեն.
Ուսէն նոյն մարդուն
Բաճկոնը կ՚առնուն,
Խեղճ մարդուն բերնէն
Ո՜ւֆեր կը թափեն:
Մըտիր ջուր շուտով,
Ապրին գետն ու ծով:

| Օ | | Լ |
|---|---|---|
| 1 | Դշ. դյ. լթ. օր Յինանց. | 4 |
| *2 | * Եշ. դէ. խ. օր Յինանց.—ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ Քրիստոսի. Եւս Ռ.—Մեծահանդէս օր ուխտագնացութեան Ս. Գէորգ եկեղեցւոյն Թելէթ գեղջ. | 5 |

| Օ | ՅՈՒՆԻՍ | Ն |
|---|---|---|
| 3 | Ուրբ. ռչ. խա. օր Յինանց.—պահք. | 6 |
| 4 | Շբ. ռէ. խբ. օր Յինանց. | 7 |
| 5 | ✠ Է Կիր. բչ. Երկրորդ Ծաղկազարդ: ☽ Ա. Ք.—Մրրկաբեր հողմունք: | 8 |
| 6 | Բշ. բէ. խդ. օր Յինանց. | 9 |
| 7 | Գշ. գչ. խե. օր Յինանց. | 10 |
| 8 | Դշ. գէ. խզ. օր Յինանց. | 11 |
| 9 | Եշ. դչ. խէ. օր Յինանց. | 12 |
| 10 | Ուրբ. դէ. խր. օր Յինանց.—պահք. | 13 |
| 11 | Շբ. ռչ. խթ. օր Յինանց. | 14 |
| 12 | ✠ Կիր. ռէ. ծ. օր Յինանց.—Տօն ՀՈԳԻՈՅԳԱԼՍՏԵԱՆ (Պենտեկոստէ). Եւս Ռ.—Բարեկենդան Եղիական պահոց. ☉ Լ. Լ.—Սպառնալիք կարկտի: | 15 |
| *13 | Բշ. բչ. բ. օր Հոգւոյգալստեան.—պահք. | 16 |
| 14 | Գշ. բէ. գ. օր Հոգւոյգալստեան.—պահք. | 17 |
| 15 | Դշ. գչ. դ. օր Հոգ.—պահք. | 18 |
| 16 | Եշ. գէ. ե. օր Հոգ.—պահք. | 19 |
| 17 | Ուրբ. դչ. զ. օր Հոգ.—պահք. | 20 |
| 18 | Շբ. դէ. է. օր Հոգւոյգալստեան. | 21 |
| 19 | ✠ Ա. Կիր. ռչ. Նախատօնակ. Առաջին պսակ.—Օր ուխտագնացութեան Ս. Աստուածածին եկեղեցւոյն քաղաքամերձ Զվինգլիս գեղջ. ☾ Վ. Ք.—Պարզ և ջերմ: | 22 |
| 20 | Բշ. ռէ.—Տօն Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց.—Նախատօնակ. | 23 |
| 21 | Գշ. բչ. Տօն Սրբոց Կուսանացն Գայիանեանց. | 24 |
| 22 | Դշ. բէ. պահք.—Նախատօնակ. | 25 |
| 23 | Եշ. գչ. Տօն սրբոցն՝ Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին. | 26 |
| 24 | Ուրբ. գէ. պահք.—Նախատօնակ.—Ռ. Ծնունդ Յօհաննու Մկրտչին. | 27 |

| Օ | ՅՈՒՆԻՍ | Լ |
|---|---|---|
| 25 | * Շբ. դձ. Տօն Սրբոյն ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ մերոյ՝ ելանելոյն 'ի վիրապէն. | 28 |
| 26 | * Բ. Կիր. դկ.—Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի.—Հարսանիք. | 29 |
| 27 | Բշ. աձ. Սրբոց Մանկանցն Բեթղեհեմի, Ակակիոսի վկային, Մովկիմայ քահանային և Կոտրատիոսի զինուորին. 🌑 Ծ. Լ.—Որոտմունք և փայլակ: | 30 |
| 28 | Գշ. ակ. Տօն Սրբոց կուսանացն Նունեայ և Մանեայ. | 1 |
| *29 | Դշ. բձ. պահք.—Ռ. Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի. | 2 |
| 30 | Եշ. բկ. Սրբոց իշխանացն Սահակայ և Յովսեփայ և սրբոց վկայիցն Սարգսի և Բագոսի. | 3 |

# ՅՈՒԼԻՍ

## 30 ՕՐ.

Նետերէն արեւու
Փախչելու 'ես հեռու:
Ծառերու զով շուքին
Կը տըրուի պատիւ հին:
Տաքն ու պաղ իրարու
Խառնելն է գիտնալու:
Տաք մարմնոյն պաղ բաղնիք,
Տաք գլխոյն պաղ քամիք,
Տաք կուրծքին պաղ պըտուղ
Կը նըստին քիչ մը սուղ:

| Օ | | Լ |
|---|---|---|
| 1 | Ուրբ. գձ. պահք. | 4 |
| 2 | Շբ. գկ. Տօն Սրբոյն Ներսեսի Մեծի Հայրապետին մերոյ և Խադայ եպիսկոպոսին. | 5 |
| 3 | * Գ. Կիր. դձ. Բարեկենդան Լուսաւորչի պահոց. | 6 |
| 4 | Բշ. դկ. պահք. Սրբոցն՝ Եպիփանու Կիպրացւոյն, Բաբե- | 7 |

| Օ | ՅՈՒԼԻՍ | Լ |
|---|---|---|
| | լայ հայրապետին և երից աշակերտաց նորին. | |
| | ☽ Ա. Ք. — Տօթագին աւուրք: | |
| 5 | Գշ. ոչ· պահք. Տօն սրբոցն՝ Կոստանդիանոսի թագաւորին և մօրն նորա Հեղինեայ. | 8 |
| 6 | Դշ. ոէ· պահք. | 9 |
| 7 | Եշ. ըչ· պահք. Սրբոցն Թէոդիտոնի Գաղատացւոյն և Թալիլեայ բժշկին և է. կուսանացն, որք յԱնկիւրիա կատարեցան. | 10 |
| 8 | Ուրբ. ըէ· պահք. — Նախատօնակ· | 11 |
| 9 | * Շբ. ծչ· Տօն Գիւտի Նշխարացն Սրբոյ Գրիգորի Լուսաւորչին մերոյ. — Հանդիսաւոր օր ուխտագնացութեան Ս. Գ. Լուսաւորիչ եկեղեցւոյն Տփխիսայ. | 12 |
| 10 | * Դ. Կիր. ծէ· — Հոգեհանգիստ· | 13 |
| 11 | Բշ. տչ· Սրբոց վկայիցն՝ Ան- | 14 |

| Օ | ՅՈՒԼԻՍ | Լ |
|---|---|---|
| | տոնինոսի, Թէոփիլոսի, Անիքտոսի և Փոտինոսի. | |
| | ◉ Լ. Լ. — Յորդ անձրևք: | |
| 12 | Գշ. տէ· Սրբոցն՝ Դանիելի մարգարէին և Երից Մանկանցն. | 15 |
| 13 | Դշ. ոչ· պահք. | 16 |
| 14 | Եշ. ոէ. Տօն Սրբոց Թարգմանչացն մերոց ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՎԲԱՅ. | 17 |
| 15 | Ուրբ. ըչ· պահք. | 18 |
| 16 | Շբ. ըէ· Սրբոցն՝ Տրդատայ թագաւորին մերոյ, Աշխէն տիկնոջն և Խոսրովիդխտոյն. — Նախատօնակ· | 19 |
| 17 | * Ե. Կիր. ծչ· Տօն Գիւտի ՏՓՈՅ Ս. Աստուածածնի. | 20 |
| 18 | Բշ. ծէ· Սրբոցն՝ Կալիստրատոսի և 49 վկայիցն. և Ղունկիանոսի քահանային. | 21 |
| | ☾ Վ. Ք. — Պարզ և ջերմին: | |
| 19 | Գշ. տչ· Տօն սրբոյն Զաքարիայ մարգարէին. | 22 |

| Օ | ՅՈՒԼԻՍ | Ն |
|---|---|---|
| 20 | Դշ դ՟ե. պահք. | 23 |
| 21 | Եշ. ա՟յ. Տօն սրբոյն Եղիայ մարգարէին. | 24 |
| *22 | Ուրբ. ա՟ե. պահք.—Անուանակոչութիւն Օգոստափառ Կայսրուհւոյն ՄԱՐԻԱՅ ՖԷՈԴՈՐՈՎՆԱՅԻ. | 25 |
| 23 | Շբ. բ՟յ. Սրբոցն Երկոտասանից Առաքելոցն Քրիստոսի և սրբոյն Պօղոսի երեքտասաներորդ Առաքելոյն. | 26 |
| 24 | * Զ. Կիր. բ՟ե.—Բարեկենդան Վարդավառի պահոց. | 27 |
| 25 | Բշ. գ՟յ. պահք. | 28 |
| 26 | Գշ. գ՟ե. պահք. | 29 |
| 27 | Դշ. դ՟յ. պահք. ● Ծ. Լ. — Ջերմախառն պարզութիւն: | 1 |
| 28 | Եշ. դ՟ե. պահք. | 2 |
| 29 | Ուրբ. ա՟յ. պահք. | 3 |
| 30 | Շբ. ա՟ե. Յիշատակ է Տապանակին հնոյ՝ և Տօն Նորոյս Սուրբ Եկեղեցւոյ.—Նաւակատիք.—Հանդիսաւոր օր ուխ- | 4 |

| Օ | ՅՈՒԼԻՍ | Ն |
|---|---|---|
| | տագնացութեան Ս. Կարապետ եկեղեցւոյն հաւլաբար Թաղին Տփխիսայ. | |
| 31 | * Կիր. բ՟յ. ՎԱՐԴԱՎԱՌ. | 5 |

# ՕԳՈՍՏՈՍ

## 31 ՕՐ.

Պտուղներն հասուն,
Բոյսերն կանգ կ՚առնուն.
Արեւն իր գործքն է
Կը լրմընցընէ:
Արեւն այրած,
Երկիրն կրակած,
Տնկերն ինկած,
Մարդիկ մըրկած:

| Օ | | Լ |
|---|---|---|
| 1 | ✠ Բշ. ճէ. բ. օր Վարդավառի. —Յիշատակ Մեռելոց.—Մեծահանդէս օր ուխտագնացութեան ծիրանաւոր Ս. Աստուածածին եկեղեցւոյն այգեստանեայց Տփխիսայ. | 6 |
| 2 | Գշ. ձյ. գ. օր Վարդավառի. ☽ Ա. Ք.—Անորժական օդք: | 7 |
| 3 | Դշ. ձէ. դ. օր Վարդավառի. —պահք. | 8 |



| Օ | | Լ |
|---|---|---|
| 4 | Եշ. տյ. Տօն Եսայեայ մարգարէին. | 9 |
| 5 | Ուրբ. տէ. զ. օր. Վարդավառի. — պահք. — Նախատօնակ. | 10 |
| *6 | Շբ. ոյ. Եփեսոսի սուրբ ժողովոյն՝ Երկու հարիւր հայրապետացն. — Թ. Վարդավառ. | 11 |
| 7 | * Բ. Կիր. ոէ.—Բարեկենդան Աստուածածնի պահոց. | 12 |
| 8 | Բշ. ճյ. ա. օր պահոց. | 13 |
| 9 | Գշ. ճէ. բ. օր պահոց. | 14 |
| 10 | Դշ. ձյ. գ. օր պահոց. ☺ Լ. Լ.—Մերթ անձրեւ և մերթ պարզ: | 15 |
| 11 | Եշ. ձէ. դ. օր պահոց. | 16 |
| 12 | Ուրբ. տյ. ե. օր. պահոց. | 17 |
| 13 | ✠ Շբ. տէ. Տօն Շողակաթին Սրբոյ ԷՋՄԻԱԾՆԻ ըստ տեսլեան Ս. Գրիգորի մերոյ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ. — Նաւակատիք. — Հանդիսաւոր օր ուխտագնացութեան Ս. | 18 |

| Օ | ՕԳՈՍՏՈՍ | Լ |
|---|---|---|
| | Աստուածածին եկեղեցւոյն (Բեթղեհեմի) Տփխիսայ. | |
| 14 | ✱ Կիր. ա:յ· ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. Աստուածածնի (հնն օր Նախատօնակ). | 19 |
| *15 | ✱ Բշ. ա:ի· բ. օր Վերափոխման. Յիշատակ Մեռելոց.—Ռ. Վերափոխումն Ս. Աստուածածնի. | 20 |
| 16 | Գշ. բ:յ· գ. օր Վերափոխման. — Ռ. Անձեռագործ Պաստառակին. | 21 |
| 17 | Դշ. բ:ի· դ. օր Վերափոխման.—պահք. | 22 |
| 18 | Եշ. գ:յ· ե. օր. Վերափոխ. ☾ Վ. Ք.—Ջովարար պարզութիւն: | 23 |
| 19 | Ուրբ. գ:ի· զ. օր Վերափոխման.—պահք. | 24 |
| 20 | Շբ. դ:յ· է. օր Վերափոխ. | 25 |
| 21 | ✱ Բ. Կիր. դ:ի· ը. օր Վերափոխման. | 26 |
| 22 | Բշ. ա:յ· թ. օր Վերափոխ- | 27 |
| 23 | Գշ. ա:ի· ժ. օր Վերափոխ- | 28 |

| Օ | ՕԳՈՍՏՈՍ | Լ |
|---|---|---|
| | ման.—Սրբոցն՝ Յովակիմայ և Աննայի՝ ծնողաց Ս. Աստուածածնի և կանանցն իւղաբերից. | |
| 24 | Դշ. բ:յ· պահք. | 29 |
| *25 | Եշ. բ:ի· Սրբոյն Երեմիայի մարգարէին.—Ռ. Յիշատակ առման Արևելեան Կովկասու. | 30 |
| 26 | Ուրբ. գ:յ· պահք. ☉ Ն. Լ.—Փոփոխութիւն օդոց: | 1 |
| 27 | Շբ. գ:ի· Սրբոց Առաքելոցն՝ Թովմայի, Յակովբայ և Շըմաւոնի.—Նախատօնակ. | 2 |
| 28 | ✱ Գ. Կիր. դ:յ· Տօն Գիւտի ԳՕՏԻՈՅ Ս. Աստուածածնի. Հարսանիք. | 3 |
| *29 | Բշ. դ:ի· Տ. Ս. Ստեփաննոսի Ուլնեցւոյն և սրբոց վկայիցն՝ Գոհարինեայ, Ծամիդեսի, Տուքիկոսի և Ռափիքոսի.—Ռ. Գլխատումն Յովհաննու Մկրտչի. | 4 |

| Օ | ՕԳՈՍՏՈՍ | Հ |
|---|---|---|
| *30 | Գշ. տյ· Սրբոց մարգարէիցն՝ Եզեկիելի, Եզրի և Զաքարիայի՝ հօրն Յօհաննու Մըրկրտչի. — Անուանակոչութիւն Ն. Կ. Մ. ԱՂԵՔՍԱՆԴՐ Գ.—ի. | 5 |
| 31 | Դշ. տէ· պահք. | 6 |

---

# ՍԵՊՏԵՄԲԵՐ

## 30 ՕՐ.

Դռներ աշնան
Ա՛լ բացուեցան.
Ցընծան հրճան
Ու այգեպան:
Չմ քաշեցէք,
Չմ կոխեցէք:
Այգին իր ծոց,
Գինին իր բոց
Կը ծաւալէ.
Այգեկութ է,
Եմ՛ր երգէ,
Պարէ, ցատկէ:

---

| Օ | | Հ |
|---|---|---|
| 1 | Եշ. ճյ· Սրբոցն Յովհաննու Կարապետին և Յօբայ արդարոյն. | 7 |
| 2 | Ուրբ. ճէ· պահք. ☽ Ա. Ք. — Ախորժական պարզութիւն: | 8 |
| 3 | Շբ. ձյ· Նիկիոյ Ս. ժողովոյն՝ | 9 |

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | Երեք հարիւր տասն և ութ հայրապետացն. | |
| 4 | * Դ. Կիր. ճէ· Բարեկենդան Ս. Խաչի պահոց. | 10 |
| 5 | Բշ. ըյ· ա. օր պահոց խաչի. | 11 |
| 6 | Գշ. ըէ· բ. օր պահոց խաչի. | 12 |
| 7 | Դշ. ռյ· գ. օր պահոց խաչի. —Նախատօնակ· | 13 |
| *8 | * Եշ. ռէ· Ծնունդ Ս. Աստուածածնի 'ի յԱննայէ.—Եւս ռուսաց. | 14 |
| | ☉ Լ. Լ.—Փոփոխական օդք: | |
| 9 | Ուրբ. բյ· ե. օր պահոց խաչի. | 15 |
| 10 | Շբ. բէ· Տօն Ս. Եկեղեցւոյ 'ի Նաւակատիս Ս. Խաչին.—Նաւակատիք. | 16 |
| 11 | * Կիր. ճյ· ԽԱՉՎԵՐԱՑ. | 17 |
| 12 | * Բշ. ճէ· Տօն խաչի.—Յիշատակ Մեռելոց. | 18 |
| 13 | Գշ. ըյ· Տօն Եկեղեցւոյ. | 19 |
| *14 | Դշ. ըէ· պահք. Տօն Եկեղեցւոյ.—Ռ. Խաչվերաց. | 20 |
| 15 | Եշ. ռյ· Տօն Եկեղեցւոյ. | 21 |
| 16 | Ուրբ. ռէ· Տօն խաչի. պահք. | 22 |

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | Ͽ Վ. Ք.—Մրրկալից աւուրք: | |
| 17 | Շբ. բյ· Տօն խաչի. | 23 |
| 18 | * Բ. Կիր. բէ· Բարեկենդան Վարագայ խաչին. | 24 |
| 19 | Բշ. ճյ· պահք. Սրբոցն Մամասայ և Փեղիքտիմոնի և Սիմէոնի Սինակեցւոյն. | 25 |
| 20 | Գշ. ճէ· պահք. Սրբոց կուսանացն Փեփրոնեայ և Մարիանեայ, և Շուշանայ՝ դստեր Մեծին Վարդանայ. | 26 |
| 21 | Դշ. ըյ· պահք. | 27 |
| 22 | Եշ. ըէ· պահք. Սրբոց հայրապետացն Բարաղամու, Անթիմոսի և Երանոսի. | 28 |
| 23 | Ուրբ. ռյ· պահք. | 29 |
| 24 | Շբ. ռէ· Սրբոյն Գէորգայ զօրավարին, Ագոկտոսի և Ռորավարին, Ագոկտոսի և Ռոմանոսի Երգեցողին.—Մեծահանդէս օր ուխտագնացութեան քաղաքամերձ Ս. Գէորգ եկեղեցւոյն Շահնապատի. | 30 |

| Օ | ՍԵՊՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | ⊛ Ծ. Լ.—Հարմութիւն օդոց: | |
| 25 | ✠ Գ. Կիր. Բյ· Տօն Վարագայ Ս. Խաչին. Հարսանիք.—Նոյն ուխտագնացութիւն. | 1 |
| *26 | Բշ. Բի· Ս. Դաւթի Դունեցւոյն և Սրբոց վկայից Ղամբէոսի և Ղամբէուհւոյն.—Ռ. Ս. Առաքելոյն և Աւետարանչի Յօհաննու Աստուածաբանին. | 2 |
| 27 | Գշ. Գյ· Սրբոցն Եւստաթէոսի և կնոջ նորա Թէոփիստոսի և երկուց որդւոցն. և սրբոց կուսանացն Երմոնեայ և Նեքտառինեայ. | 3 |
| 28 | Դշ. Գի· պահք: | 4 |
| 29 | Եշ. Դյ· Սրբոց Իշխանացն Սահակայ և Համազասպայ. | 5 |
| 30 | Ուրբ. Դի· պահք. | 6 |

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

## 31 ՕՐ.

Օդն է կիսաբաց,
Բրնութիւն մարած.
Եւ կամաց կամաց
Մեր ներքին կենաց
Օրերն կը հասնին:
Տուր բարև վերջին
Բրլուրին, դաշտին,
Գեղերու յարկին:
Տես՝ ինչպէս մէկէն
Արևն աս երկրէն,
Երկիրը տունկէն,
Տունկը կանաչէն,
Կանաչը տերևէն,
Տերևը ծառէն,
Ծառն ալ իր շուքէն,
Ձուքն ալ իր հիւրէն,
Հիւրն ալ ամենէն
Հրաժեշտ կ՚առնեն:

| Օ | | Լ |
|---|---|---|
| *1 | Շբ. Եյ· Սրբոց Եօթանասուն և երկու Աշակերտացն | 7 |

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | Քրիստոսի. — Ռ. Հովանաւորութիւն Ս. Աստուածածնի. | |
| | ☽ Ա. Ք. — Զովագին աւուրք։ | |
| 2 | ✣ Դ. Կիր. տն· [illegible] | 8 |
| 3 | Բշ. ճյ· Սրբոցն Փոկասու հայրապետին և Երանոսի՝ հետևողին Առաքելոցն. | 9 |
| 4 | Գշ. ճն· Սրբոց կուսանացն՝ Թեկղի, Վառվառեայ և Պեղիգեայ. | 10 |
| 5 | Դշ. ձյ· պահք. | 11 |
| 6 | Եշ. ձն· Պանդալէոնի բժշկին, Երմողեայ քահանային և Եւպրակսեայ կուսին. | 12 |
| 7 | Ուրբ. ծյ· պահք. | 13 |
| 8 | Շբ. ծն· Սրբոց Թարգմանչաց Վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսեսի Քերթողին, Դաւթի Անյաղթ Փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսեսի Կլայեցւոյն. | 14 |

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | ☺ Լ. Լ. — Անձրևային և խոնաւ օդք։ | |
| 9 | ✣ Ե. Կիր. տյ· | 15 |
| 10 | Բշ. տն· Գիւտ նշխարացն Սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսին և սրբոց հարցն՝ Թաթւլոյ, Վարոսի և Թումասու. Անտոնի և Կրոնիդեայ և է. Խոտաճարականցն՝ որք չինկնեան վանսն կատարեցան. | 16 |
| 11 | Գշ. ճյ· Սրբոց Առաքելոցն Անանիայի, Մատթէի, Բառնաբայ, Փիլիպպոսի, Յովհաննու, Ճիղայի և Սեւգիանոսի. | 17 |
| 12 | Դշ. ճն· պահք. | 18 |
| 13 | Եշ. ձյ· Սրբոց Դիոնեսիոսի Արիսպագացւոյն և սրբոց Առաքելոյն Տիմոթէոսի և Տիտոսի. | 19 |
| 14 | Ուրբ. ձն· պահք. | 20 |
| 15 | Շբ. ծյ· Սրբոց Աւետարանչացն՝ Մատթէոսի, Մարկո- | 21 |

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | սի, Ղուկասու և Յովհաննու. | 22 |
| 16 | * Զ. Կիր. տէ· Հօրտոնիք· ☾ Վ. Ք.—Աշնանային աւուրք: | |
| | | 23 |
| 17 | Բշ. տյ· Սրբոցն Ղունկիանոսի հարիւրապետին՝ որ հաւահարիւրապետին՝ որ հաւատաց 'ի խաչելութիւնն Քրիստոսի. Սրբոցն Յովսեփայ Աստուածահօրն և Յովսեփայ Արեմաթացւոյն, բարեկամին Քրիստոսի՝ Ղազարու և քերցն Նորա Մարթայի և Մարիամու. | |
| | | 24 |
| 18 | Գշ. տէ· Սրբոցն Թէոդիտոնի քահանային և Զենոնի զինաւորին. և Մակարայ, Դոքսիայ և Թամելայ: | |
| | | 25 |
| 19 | Դշ. ճյ· պահք. | 26 |
| 20 | Եշ. ճէ· Սրբոց Խարիթեանցն և սրբոց վկայիցն Կալինիկեայ և Ակուլինեայ. | |
| | | 27 |
| 21 | Ուրբ. գյ· պահք. | 28 |
| *22 | Շբ. գէ· Տօն Սրբոց Երկոտասանից Վարդապետացն՝ Թե- | |

| Օ | ՀՈԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | թէոսի, Դիոնեսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիւրղի Երուսաղեմացւոյն, Եփրեմի Խուրին Ասորւոյ, Բարսղի Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եպիփանու Կիպրացւոյն, Յօհաննու Ոսկեբերանին և Կիւրղի Աղեքսանդրացւոյն.—Ի. Հրաշագործ պատկերին Ս. Աստուածածնին Ղազանու. | |
| 23 | * Ի. Կիր. ջյ· Գիւտ ԽԱՉԻ.—Հարսանիք. | 29 |
| 24 | Բշ. ջէ· Սրբոցն՝ Անաստասայ քահանային, Վարոսի, Թէոգիտեայ և որդւոց Նորա, և որք ընդ Նմա կատարեցան. ☉ Ծ. Լ.—Ամպամած և խոնաւ օդք: | 1 |
| 25 | Գշ. տյ· Սրբոց Հիպիրիքեանցըն, որք 'ի Սամուսատ կատարեցան. | 2 |
| 26 | Դշ. տէ· պահք. | 3 |

Օ **ՀՈԿՏԵՄԲԵՐ** Լ

27 Եշ. Ըյ· Սրբոց Սեւերիանոսի Սեբաստացւոյն և Բաբելայ ծերոյն, և 84 աշակերտաց նորին. 4

28 Ուրբ. Ըէ· պահք. 5

29 Շբ. Թյ· Սրբոյն Յօհաննու Ոսկեբերան հայրապետին. 6

30 * Ը. Կիր. Թէ· Հարսանիք. 7

31 Բշ. Ժյ· Սրբոյն Ստեփանոսի Հռոմայ հայրապետին և Քահանայից, Սարկաւագացն և Ժողովրդոցն. 8

☽ Ա. Ք.—Խոնաւ և մէգ։

---

# ՆՈՅԵՄԲԵՐ

## 30 ՕՐ·

Նոյեմբերնիս
Որսի ամիս։
Մէգ ու մըշուշ
Մահուան են գոյժ,
Են շունչ վերջին
Մօր մը կեանքին.
Մօր բընութեան,
Պաուլի Նըման։
Անձ կարճ արև,
Բայց երկայն անձրև.
Ցուրտը մէկ դիէն,
Խոնաւն անդիէն,
Մարդը կը նեղէ
Դուն աղէկ հագուէ։

Օ Լ

---

1 Գշ. Ժէ· Սրբոցն՝ Ակիփսեմեայ եպիսկոպոսին և Յովսեփայ քահանային, Այիթալայ սարկաւագին և Պղատոնի վըկային. 9

| Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| 2 | Դշ. ռչ· պահք. | 10 |
| 3 | Եշ. ռէ· Սրբոց հայրապետացըն Մետրոփանոսի, Աղեքսանդրոսի և Պօղոսի խոստովանողին և սրբոց նօտարացն Մարկիանոսի և Մարտիրոսի. | 11 |
| 4 | Ուրբ սչ· պահք. Նախատօնակ· | 12 |
| 5 | ✠ Շբ. սէ· Տօն Սրբոց Հրեշտակապետացն՝ Գաբրիելի և Միքայելի և ամենայն երկնային Զօրացն.—Օր ուխտագնացութեան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյն Տփխիսայ. | 13 |
| 6 | ✠ Թ. Կիր. վչ· | 14 |
| 7 | Բշ. վէ· Սրբոցն՝ Մելիտոսի՝ Անտիոքայ հայրապետին, Մինասայ Եգիպտացւոյն և միւս Մելիտոսի եպիսկոպոսին, Բուրայ քահանային և Ճինու սարկաւագին. | 15 |
| | ☉ Լ. Լ.—Անձրև և ապա պարզ: | |

| Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| 8 | Գշ. տչ· Սրբոցն՝ Դեմետրեայ վկային և Բասիլիսկոսի քահանային. | 16 |
| 9 | Դշ. տէ· պահք. | 17 |
| 10 | Եշ. րչ· Սրբոցն՝ Գուրիասայ, Սամոււնասայ և Աբիբայ սարկաւագին, Ռամանոսի միայնակեցին, Մանկանն խոստովանողի և Հիւսիքոսի զինուորին.—Հանդիսաւոր օր ուխտագնացութեան Ս. Գէորգ եկեղեցւոյն Բոլնիս գեղջ.—Տարեդարձ Օծման Վեհափառ Հայրապետին ամենայն Հայոց Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ա.. | 18 |
| 11 | Ուրբ. րէ· պահք. | 19 |
| 12 | Շբ. ցչ· Սրբոց Առաքելոցն Անդրէի և Փիլիպպոսի. | 20 |
| 13 | ✠ Ժ. Կիր. ցէ· | 21 |
| *14 | Բշ. ւչ· Անդրէի զօրավարին և բանակի նորին, Կալինիկոսի և Դոմետեայ վկայիցն.—Ծնունդ Օգոստա- | 22 |

| Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | փառ. Կայսրուհւոյն ՄԱՐԻԱՅ ՖԷՈԴՈՐՈՎՆԱՅԻ. | |
| 15 | Գշ. ձէ· Անդրիանոսի և կնոջն Անատոլայ, Թէոդորոսի և Ելևթիւրոսի վկայիցն.—Ռ. Բարեկենդան ծննդ. պահոց. ☾ Վ. Ք.—Փոփոխական օդք: | 23 |
| 16 | Դշ. տչ· պահք. | 24 |
| 17 | Եշ. տէ· Աբրահամու և Խորենայ և անարծաթ բժշկացն Կոզմայի և Դամիանոսի և Աստուածատրոյ վրկային. | 25 |
| 18 | Ուրբ. աչ· պահք. | 26 |
| 19 | ✠ Շբ. աէ· Տօն Ամենայն Սրբոց՝ Հնոց և Նորոց. | 27 |
| 20 | ✠ ԺԱ. Կիր. ճչ· Բարեկենդան Յիսնակի պահոց. | 28 |
| *21 | ✠ Բշ. ճէ· Ընծայումն Ս. Աստուածածնի 'ի տաճարն. Եւս Ռուսաց. | 29 |
| 22 | Գշ. ձչ· ա. օր պահոց Յիսնակի. | 30 |

| Օ | ՆՈՅԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | ☉ Տ. Լ.—Անձրևաբեր հողմունք: | |
| 23 | Դշ. ձէ· բ. օր պահոց Յիսնակի. | 1 |
| 34 | Եշ. տչ· գ. օր պահոց Յիսնակի. | 2 |
| 25 | Ուրբ. տէ· դ. օր պահոց Յիսնակի. | 3 |
| 26 | Շբ. աչ· Սրբոցն՝ Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի հայրապետին և Միւռոնայ եպիսկոպոսին. | 4 |
| 27 | ✠ Ա. Կիր. աէ· Հարսանիք· | 5 |
| 28 | Բշ. ճչ· Սրբոց կուսանացն՝ Յուլիանեայ և Վասիլուհւոյ. | 6 |
| 29 | Գշ. ճէ· Սրբոյն Ղունկիանոսի քահանային և սրբոցն Տարագրոսի, Պրոպոսի, Անդրոնիկոսի և Ոնիսեմեայ և այլոց աշակերտացն Պօղոսի. | 7 |
| 30 | Դշ. ձչ· պահք. ☽ Ա. Ք.—Հարթութիւն օդոց: | 8 |

# ԴԵԿՏԵՄԲԵՐ

## 31 ՕՐ.

Անձ բուն ձրմեռ
Բերաւ Դեկտեմբեր։
Ցուրտ, սառոյց ու ձիւն
Կուտան թրմրութիւն
Երկրին ու մարդուն.
Քաշուելու է տուն։
Ուիշդ արևէն չառած բանըդ,
Կուտայ քեզի վառարանըդ,
Բարիքն եկած կրակէն
Արևինէն վար մը չեն։

| Օ | | Լ |
|---|---|---|
| 1 | Եշ. Գ։ Սրբոցն՝ Կղեմայ հայրապետին և Բագարատայ Տոռոմենոյ եպիսկոպոսին. | 9 |
| 2 | Ուրբ. Դյ. պահք. Նախատօնակ. | 10 |
| 3 | * Շբ. Ե։ Սրբոց Առաքելոցն և առաջին Լուսաւորչացն մերոց ԹԱԴԷՈՍԻ և ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ. | 11 |



| | | |
|---|---|---|
| 4 | * Բ. Կիր. Ալ.—Հարսանիք. | 12 |
| 5 | Բշ. Ա։ Սրբոցն՝ Գենարիոսի եպիսկոպոսին և Մեռկեռիոսի զինաւորին. Յակովկայ և Իրաւափառայ. | 13 |
| *6 | Գշ. Բյ. Տօն Նախավկայ և անդրանիկ թագաւորին մերոյ Սրբոյն Աբգարու.—Ռ. Նիկողայոսի Սքանչելագործի. — Անուանակոչութիւն Վսեմափառ թագաժառանգին Նիկոլայ Աղեքսանդրովչին. | 14 |
| 7 | Դշ. Բ։ պահք. | 15 |
| | ☉ Լ. Լ.—Ձիւն և ցուրտ։ | |
| 8 | Եշ. Գյ. Սրբոց հարցն Եգիպտացւոց՝ Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յօհաննու Կարճահասակին, Նեղոսի, Արսենի, Սիսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմենի, և այլոց սրբոց հարցն.— Անուանակոչութիւն Վեհափառ Հայ- | 16 |

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | րապետին Ամենայն Հայոց Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ա.—Նախատօնակ. | |
| 9 | ✠ Ուրբ. Վէ. Յղութիւն Ս. Աստուածածնի 'ի յԱննայէ. Եւս ուստց. | 17 |
| 10 | Շբ. ԹՅ. Սրբոյն Նիկողայոսի Զմիւռնացւոյ Սքանչելագործ հայրապետին. | 18 |
| 11 | ✠ Գ. Կիր ԹԷ. Բարեկենդան Ս. Յակովբայ պահոց.—Հանգիստ օր ուխտագնացութեան Ս. Մինաս եկեղեցւոյն Տփխիսայ. | 19 |
| 12 | Բշ. ԺՅ. ա. օր պահոց.–Սրբոցն՝ Մինասայ, Երմոգինեայ և Գրաբոսի, և կամաւոր աղքատացն Յօհաննու և Աղեքսիանոսի. | 20 |
| 13 | Գշ. ԺԷ. բ. օր պահոց.—Սրբոցն Կոռնելիոսի հարիւրապետին և Ճմաւոնի՝ ազգականին Քրիստոսի, որ խաչեցաւ յԵրուսաղէմ. Պօղի- | 21 |

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | կարպոսի հայրապետին Ըզմիւռնիոյ և սրբոց վկայից, որ յարնեյս կատարեցան. | |
| 14 | Դշ. ԺՅ. գ. օր պահոց. | 22 |
| | ☾ Վ. Ք.—Բքաբեր աւուրք: | |
| 15 | Եշ. ԺԷ. դ. օր պահոց.—Սրբոցն Եւստրատիոսի, Օգսենտիոսի, Եւգինէոսի, Ովրեստեսի և Մարդարիոսի. | 23 |
| 16 | Ուրբ. ԺՅ. ե. օր պահոց. | 24 |
| 17 | Շբ. ԺԷ. Տօն Սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին, Մարուգէի ճգնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին.—Հանգիստ օր ուխտագրնացութեան Նշխարաց Ս. Յակոբ հայրապետին, ամփոփելոցն 'ի Վանաց աւագ եկեղեցւոջ Տփխիսայ. | 25 |
| 18 | ✠ Դ. Կիր. ԹՅ. Հարանցի. | 26 |
| 19 | Բշ. ԹԷ. Սրբոց հայրապետացըն՝ Իգնատիոսի, Անդէի և Մարութայի եպիսկոպոսին. | 27 |
| 20 | Գշ. ԺՅ. Սրբոցն Թէոպոմպայ | 28 |

եպիսկոպոսին, Թէոփնայ վրկային և չորից զինուորացըն՝ Բասոսի, Եւսեբի, Եւտիգի և Բասիլիդեայ.

21 Դշ. ռէ· պահք. 29

22 Եշ. ըյ· Սրբոց կուսանացն Ինդոսի և Դոմնայի, Գղերիկոսի քահանային և Երկուց Բիւրուցն, որք այրեցան յեկեղեցին Նիկոմիդացւոց. 1

⊛ Տ. Լ.—Խոնաւ և ցուրտ:

23 Ուրբ. ըէ· պահք. Նախատօնակ. 2

24 Շբ. գյ· Դաւթի մարգարէին և Յակոբայ Առաքելոյն. 3

25 ✠ Ե. Կիր. գէ·—Ռ. Ծնունդ Քրիստոսի. 4

*26 Բշ. դյ· Տօն Սրբոյն Ստեփանոսի Նախավկային և առաջին մարտիրոսին.—Հանդիսաւոր օր ուխտագնացութեան Ս. Ստեփանոս եկեղեցւոյն Տփխիսայ, որ յԱնապատին Կուսանաց.—Նախատօնակ. 5

*27 Գշ. դէ· Սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի.—Նախատօնակ. 6

28 Դշ. ռյ· պահք. 7

29 Եշ. ռէ· Տօն Որդւոց Որոտման՝ Սրբոցն Յակոբայ Առաքելոյն և Յօհաննու Աւետարանչին.— Բարեկենդան Ծննդեան պահոց. 8

◐ Ա. Ք.—Սառնամանիք:

30 Ուրբ. ըյ· ա. օր պահոց Ծրնընդեան. 9

31 Շբ. ըէ· բ. օր պահոց Ծննդեան.—Տօն Սրբոցն՝ Բարսղի հայրապետին, և եղբօր նորին Գրիգորի Նիւսացւոյն, Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետին և Աբբայ Եփրեմի Խուրին Ասորւոյ: 10

Կազմեց Յ. Նալբանդեան:

# ՏԱՂԵՐ ԵՒ ՃԱՐԱԿԱՆՆԵՐ

---

## ՅՈՒՆՈՒԱՐ

### (5-ին) ՏԱՂ ԾՆՆԴԵԱՆ

Այսօր տօն է Ծննդեան, աւետիս.
Տեառն մերոյ և յայտնութեան, աւետիս:
Այսօր արևն արդարութեան, աւետիս.
Երևեցաւ 'ի մէջ մարդկան, աւետիս:
Այսօր Սուրբ Կոյսն անապական, աւետիս.
Ծընաւ եբեր զանմահ Արքայն, աւետիս:
Այսօր հրեշտակք յերկնից իջան, աւետիս.
Ընդ մեզ օրհնեն զԱնմահ Արքայն, աւետիս:

---



### (6) ԿԱՆՈՆ ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:
Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ:
Անքաւելին երկնի և երկրի ի խանձարուրս պատեցաւ. ո՛չ մեկնելով ի Հօրէ, ի սուրբ այրին բազմեցաւ:

---

## ԵՐԳ ՓԱՌԱԲԱՆԱԿԱՆ

### (զկնի Տէր երկնիցին)

Փա՛ռք 'ի բարձունս Աստուծոյ.' և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն. և օրհնութիւն Քեզ 'ի բարձունս: Օրհնեալ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք զՔեզ, և գովեմք զՔեզ: Խոստովանիմք, տէր զՔեզ, և երկիրպագանեմք Քեզ. փառաւորեմք զՔեզ, գոհանամք, Տէր զՔէն վասն մեծի փա-

ռաց Քոց: Տէր թագաւոր Սուրբդ երկնային՝ Աստուած և Հայր Ամենակալ: Տէր և Որդի Հօր միածին Յիսուս Քրիստոս և Սուրբ Որդի: Տէր Աստուած՝ գառն Աստուծոյ և Որդի Հօր՝ որ առեր զմերս 'ի Կուսէն: Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի. և արդ ընկալ զաղաչանս մեր: Սուրբդ որ նստիս ընդ աջմէ Հօր՝ ողորմեա՛ց մեզ: Զի Դու միայն Սուրբ՝ Դու միայն բարձրեալ ես, Դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս: Տէր և Հոգիդ Սուրբ որ 'ի փառս Աստուած ընդ Հօր. ամէն:

Եւ յամենայն ժամ օրհնեմք զՔեզ Տէր՝ և գովեմք զանուն սուրբ Քո յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից: Արժանի՛ արա, Տէր զօրս զայս խաղաղութեամբ՝ և առանց մեղաց պահեա՛ զմեզ: Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց. գովեալ և փառաւորեալ է անուն սուրբ Քո յաւիտեանս. ամէն: Օրհնեա՛լ Տէր՝ ուսո՛ ինձ զարդարութիւնս Քո: (Երիցս կրկնեա՛):

Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ: Ես աղաչեմ, Տէր ողորմեա՛ ինձ և բր-



ժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ Քեզ: Յո՛յց մեզ, Տէր, զողորմութիւնս Քո՝ և զփրկութիւնս Քո տո՛ւր մեզ: Տէր, ողորմութիւն Քո յաւիտեան, զգործս ձեռաց Քոց մի՛ անտես առներ: Տէր իմ զՔեզ ապաւէն ինձ արարի. ուսո՛ ինձ առնել զկամս Քո. զի Դո՛ւ ես Աստուած իմ: 'Ի Քէն է, Տէր՝ աղբիւր կենդանութեան. և լուսով երեսաց Քոց տեսանեմք զլոյս: Ծագեա՛ զողորմութիւնս Քո՝ որք ճանաչեն զՔեզ, Տէր:

---

## ՏԱՂ ՋՐՕՐՀՆԵԱՑ

Ո՞վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ. արարիչն Աստուած 'ի Յորդանան եկեալ:

Կամէր մկրտիլ 'ի ծառայէն իւրմէ. չառնոյր Կարապետն զմկրտիլն 'ի յանձն:

Յորդանան լուեալ, փախստական դառնայր. վտակ առ վտակ պատգամաւոր լինէր:

Գնա՛, մի՛ զարհուրիր, քո արարիչն եմ ես. եկեալ մկրտիմ և լուանամ զմեզս:

Յիսուս յառաջեաց աստուածութեամբն 'ի ջուրն՝ հանդերձ Յօհաննու Յիսուս 'ի գետն եմուտ:

Երկինք պատառեալ, ձայն 'ի յերկնից իջեալ, ձայն Հօր 'ի բարձանց՝ Որդւոյն իւր վկայեալ:

Դա է իմ Որդի, ընդ որ հաճեցայ, ասէր. Դմա՛ լուարո՛ւք, որդիք մարդկան՝ ձայնէր:

Սուրբ Հոգին իջեալ աղաւնակերպ տեսլեամբ, յայտնեալ ցուցանէր Հօր փառակից զՈրդին:

Արդ օրհնեալ է Հայր և համագոյ Որդին, Հոգւոյն ճշմարտի փառք յաւիտեանս, ամէն:

---

Այսօր ձայնն հայրական՝ յերկնից իջեալ՝ հանդոյական. սիրեցելոյ Որդւոյ վկայն. ա՛յ յորդորէ, գնա յորդորէ, գնա Յորդանան. յորդորական ձայնիւ երգէր մեծ Կարապետն Յովհաննէս:

---



# ՓԵՏՐՈՒԱՐ

## (14) ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ ԳԱԼՍՏԵԱՆ ՏԵԱՌՆ Ի ՏԱՃԱՐՆ (Աձ.)

Մարմնացեալդ ի Կուսէն Նախայաւիտեան բանդ, այսօր ի տաճարն եկիր կատարել զօրէնս. վասն փրկութեան հեթանոսաց:

Որ յանարուեստ աթոռ Նստիս բարեբանեալդ ի հրեշտակաց. այսօր ի Սիմէոնէ բառնալով ի գիրկս. որ ընծայեսցես զմեզ ի կեանսդ յաւիտենից:

Որ արձակիչդ ես կապելոց պարգևատու ամենեցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և զիս զբազմամեղս ի կապանաց մահու ի կեանսդ յաւիտենից:

---

# ՄԱՐՏ

## (3) ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ (Դկ.)

Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ առաքինեաց. փառեցար զինու հոգւոյն

արիաբար ընդդէմ մահու. Վարդան քաջ նահատակ որ վանեցեր զթշնամին, վարդագոյն արեամբդ քով պսակեցեր զեկեղեցի։

---

# ԱՊՐԻԼ

## (9) ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՄԵՐՈՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ (Գկ.)

Այսօր զուարճացեալ ցնծայ եկեղեցի. գրախտ աստուածատունկ ծաղկեալ. յորմէ տուաւ մեզ տունկն անմահութեան տէր Գրիգորիոս. և պտղովն իւրով ելից զտիեզերս ամենայն։

---

## (17) ԾԱՂԿԱԶԱՐԴ ԿԻՒՐԱԿԷԻՆ.

(Աձ.) Որ վերօրհնիս յաթոռս քերովբէից. 'ի վերայ Նստիլ յաւանակի հաճեցար. բարեբանեալ որ եկիրդ 'ի կեցուցանել։ —



(Դձ.) Թագաւոր գոլով քո յաշխարհ, մտեր 'ի քաղաքն Երուսաղէմ. Նստեալ 'ի վերայ հողեղէն Նոր յաւանակի՝ կոչէր զհեթանոսս յերկրպագութիւն։

---

## (21) ՄԵԾԻ ՀԻՆԳՇԱԲԱԹԻՆ (Ակ.)

Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան, 'ի թողութիւն մեղաց մերոց։

Այսօր Տէրն մեր լուանայր զոտս աշակերտացն և պատուիրէր զայս ասելով։

Մի ոմն 'ի ձէնջ, ասէ, եղբարք, զիս մատնելոց է առի մահ և որոշի յաշակերտացդ։

Ձայն լուեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէս՝ հարցանել թէ ով իցէ։

Բանն զոր ասաց Յիսուս, տրտմեցոյց զիւր զաշակերտսն և խռովեցան ամենեքեան։

---

(Գձ.) Որ կազմեցեր սեղան խորհրդոյ և արբուցեր յանմահական բաժա-

կէն սրբոց քոց առաքելոց այսօր ՚ի սուրբ վերնատանն. աղաչեմք, Փրկիչ, ողորմեա:

Մաքրեա զմիտս և զխորհուրդս. զի և մեք հաղորդեսցուք սրբութեամբ ընդ սրբոց քոց առաքելոց. այսօր ՚ի սուրբ վերնատանն. աղաչեմք, Փրկիչ, ողորմեա:

---

## (22) ՄԵԾԻ ՇԱԲԱԹՈՒՆ ԹԱՂՄԱՆ ՏԵԱՌՆ ՅԻՍՈՒՍԻ (Բճ.)

Պարգևատուն ամենեցուն այսօր խնդրի պարգևս ՚ի Պիղատոսէ. և արկողն զլոյս որպէս զօթոց՝ հաւանի պատիլ ՚ի Յովսեփայ:

---

## (24) ՍՐԲՈՅ ԶԱՏԿԻ (Աճ.)

Այսօր յարեաւ ՚ի մեռելոց Փեսայն անմահ և երկնաւոր. քեզ աւետիք խընդութեան հարսն ի յերկրէ եկեղեցի. օրհնեա ՚ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն:



Այսօր անճառ լոյսն ՚ի լուսոյ լուսաւորեաց զմանկունս քո. լուսաւորեա Երուսաղէմ, քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս. օրհնեա ՚ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն:

Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն. և քեզ ծագեաց լոյս գիտութեան յարուցեալն ՚ի մեռելոց Քրիստոս. օրհնեա ՚ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն:

---

# ՅՈՒՆԻՍ

## (2) ՀԱՄԲԱՐՁՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ (Դճ.)

Համբարձաւ Տէրն մեր յերկինս, ասելով աշակերտացն. նստարուք ՚ի քաղաքիդ յԵրուսաղէմ, մինչև զգենուցուք զզօրութիւն ՚ի բարձանց:

Միաբանեալ սուրբ առաքեալքն միախորհ և միակրօն. միաբան նստէին ՚ի սուրբ վերնատանն և ակն ունէին գալստեան Սուրբ Հոգւոյն:

Յանկարծակի եհաս ՚ի նմանութիւն

լուսոյ փայլման. և եկեալ բնակեցաւ 'ի սուրբ Առաքեալսն, մինչդեռ նըստէին 'ի սուրբ վերնատանն:

---

## (5) ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ (Դկ.)

Մեծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ. զոր հոգւոց լուսատուն 'ի պաշտպանէն իւրմէ լուեալ. եթէ տօն մեծ է այսօր իմոյ դասուն որ ի յերկինս:

---

## (12) ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻՆ (Դձ.)

Առաքելոյ Աղաւնւոյ իջանելով մեծաձայն հնչմամբ 'ի բարձանց 'ի նմանութիւն լուսոյ փայլման հրազինեաց անկիզելի զաշակերտսն. մինչդեռ նստէին 'ի սուրբ վերնատանն:

Աննիւթական Աղաւնի. անքննելի, որ քննէ զխորս Աստուծոյ. զոր առեալ 'ի Հօրէ պատմէ զահաւոր և զմիւսանգամ գալուստն. զոր քարոզեցին համագոյական:



Օրհնութիւն 'ի բարձունս Ելողին 'ի Հօրէ՝ Հոգւոյն Սրբոյ. որով առաքեալքըն արբեցան անմահական բաժակաւն. և հրաւիրեցին զերկիրս ի յերկինս:

---

## (20) ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ (Դկ.)

Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի՝ երկնաւոր նահատակք և կուսանք իմաստունք. 'ի պարծանս ձեր բարձրացեալ տօնէ մայր Սիոն դստերօքն իւրովք:

---

## (26) ՃՈՂԱԿԱԹԻՆ (Դկ.)

Իջ Միածինն 'ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա. ձայնք հնչեցին սանդարամետք անդնդոց:

Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի. պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:

Եկա՛յք շինեսցուք սուրբ գխորանն լուսոյ. քանզի 'ի սմա ծագեաց մեզ լոյս 'ի Հայաստան աշխարհի:

---

## ՅՈՒԼԻՍ

### (14) ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑՆ (Ակ.)

Որք զարդարեցին տնօրինաբար զխիմաստս Անեղին, հաստատելով յերկրի զգիր կենդանի հոգւոյ զհօտ նոր Իսրայելի. երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցուք:

---

### (31) ՎԱՐԴԱՎԱՌԻ ԱՌԱՋՆՈՅ ԱԻՈՒՐ (Աձ.)

Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր զաստուածային քո զօրութիւնդ. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս:

Որ զճառագայթ փառաց քոց ցուցեր



արեգակնակերպ փայլմամբ զարարածս լուսաւորեցեր. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս:

Որ անհագին տեսլեամբ զարհուրեցուցեր զքո զաշակերտսն 'ի թմրութիւն հրաշիցն 'ի սէր աստուածային փառաց քոց. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս:

---

## ՕԳՈՍՏՈՍ

### (14) ՎԵՐԱՓՈԽՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ (Դձ.)

Այսօր ժողովեալ սրբոցն 'ի միասին Երանելի Առաքեալքն և սուրբ կուսանքն, ջահազգեստուք պայծառացեալք լուցանէին զլապտերս իւրեանց. և միաձայնեալք ասէին. օրհնեա՜լ ես ամենօրհնեա՛լդ 'ի կանայս:

---

# ՍԵՊՏԵՄԲԵՐ

## (11) ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՒՈՒՐՆ (Դձ.)

Զօրութիւն Սուրբ Խաչի քո Քրիստոս, որ կանգնեցեր 'ի փրկութիւն աշխարհի. սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ:

Քանզի 'ի սմա բարձրացար Աստուած, և 'ի սմա հեղեր զպատուական սուրբ զարիւնդ. սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ:

Եւ զքո միւսանգամ զգալուստդ նշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի. սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ:

---

(Բկ.) Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք, և զսուրբ զթաղումնդ քո մեծացուցանեմք. և զսուրբ զյարութիւնդ քո փառաւորեմք: Եկայք, հաւատացեալք, երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասնզի եկն 'ի



ձեռն Խաչին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի. Սուրբ Աստուած, Սուրբ և հզօր, Սուրբ և անմահ, որ յարեար 'ի մեռելոց՝ ողորմեա մեզ: (Երիցս կըրկնելով :

Փառք սուրբ Խաչիդ, ալէլուեայ. Խաչեցելոյդ, ալէլուեայ, սուրբ յարութեանդ, ալէլուեայ: Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց և ետուր ուրախութիւն սրտից մերոց: 'Ի պտղոյ ցորենոյ, գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա: (Երիցս կրկնելով):

---

## (25) ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ (Ակ.)

Նշանաւ ամենայաղթ Խաչիւդ քո Քրիստոս պահպանեա զմեզ, մարդասէր, յաներևոյթ թշնամւոյն, զի Դու միայն ես թագաւոր փառաց՝ օրհնեալ յաւիտեան:

Որ 'ի վերայ սորա տարածեցեր զանարատ բազուկս քո. և հեղեր զարիւնդ 'ի փրկութիւն տիեզերաց. զի դու

միայն ես Թագաւոր փառաց՝ օրհնեալ յաւիտեան:

'Ի միւսանգամ քո գալստեանն յերևիլ Սուրբ Նշանիս արժանի՛ արա զծառայս քո վերստին Նորոգման. զի Դու միայն ես Թագաւոր փառաց՝ օրհնեալ յաւիտեան:

---

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

Կ Ը Զ Մ Ը Ժ

## 1888 ԹՈՒԱԿԱՆԻ

# ՕՐԱՑՈՒՑԻ

---

### ԿԱՂԱՆԴ

Կաղանդ է, մարդիկ կաղանդչէք-
ներով
Բեռցրուած՝ վրխտան 'ի տիղմ 'ի փողոց,
Նոր տարին մաղթեն միմեանց սիրով,
Ամենուստ լըսուի ուրախ շշրնկոց:
Որբ և անօթի տղեկ մը մուրացիկ
Ողորմուկ կրունակն պատին կրթընած՝
Ոտքեր ցեխին մէջ՝ կը մուրայ հացիկ,
Ձըրթունքը ցամքեր, այլ աչքերն են
թաց:

Հարուստ մը կառքով անցնէր այն ճամբէն,
Գըրկին մէջ առած մանկիկ մ'ոսկեհեր,
Ու զայն գըգուելով մրնչէր ականջէն.
„Պիտի տայ կաղանդըն քեզ ճոխ ընծաներ“:

Մուրացիկն անոնց ձեռքը կարկառեց,
Զուգեց կաղանդչէք, այլ հացի մը գին.
Ողորմութեան տեղ, փոխարէն վայլեց
Կառքէն սըրսկուած կաթիլներ ցեխին:

Ի՞նչ հակապատկեր. մին յերջանկութիւն
Գիրկէր հօրը հետ կառքին մէջ հանգիստ.
Այլ միւսն անօթի.. անկողինն իւր՝ ձիւն,
Աշխարհ իրեն դէմ, անգութ է և խիստ:

Մեծատան որդին երբ մըտնէ ի տուն,
Կաղանդ, մոմ, ընծայք զայն դիմաւորեն.
Ծնողին խանդակաթ համբոյրք սիրասուն
Նոր տարւոյն դըրանց բանալիներն են:

Մինչդեռ մթին մէջ լքեալ երեխայն
Խարխափէ անտէր, սոսկման մեռնի.



Իբրև հին տարւոյն պատկեր լըռելեայն
Ծըրջանէն դադրած՝ յաւէտ շիջանի:

Սակայն աշխարհիս հաճոյքն անցաւոր
Ցընդին զերթ շոգի, մոմերը մարին.
Փըշրին ընծաներ, և երկիրըս կըլոր
Դառնայ շարունակ դըժգոհ, տըխրագին:

Բայց այդ աղքատիկ մանուկըն քաղցած
Երթայ երջանիկ յերկինս իւր Հօր տուն,
Ուր որ լոյսերը միշտ մընան վառած,
Ուր որ մըշտատև կաղանդ է, գարուն:

Պ. Հ. Ադամեան.

# 1888 ԹՈՒԱԿԱՆԻ

## ԱՅՆ ՏՕՆ ՕՐԵՐԸ,

Երբ Հայոց ուսումնարաններում

պարապմունք չէ լինելու:

### ՅՈՒՆՈՒԱՐ

1, 2 և 4.—Արձակուրդ Ծննդեան.
5 Դշ. } Ծնունդ և Յայտնութիւն
6 Դշ. } Տեառն.
13 Դշ.—Անուանակոչութիւն Տեառն.

### ՓԵՏՐՈՒԱՐ

26 Ուրբ.—Ծնունդ Ն. Կ. Մ. ԱՂԵՔՍԱՆԴՐԻ Գ.-ի.

### ՄԱՐՏ

2 Դշ.—Գահակալութիւն Ն. Կ. Մ. ԱՂԵՔՍԱՆԴՐԻ Գ.-ի.
3 Եշ.—Սրբոց ՎԱՐԴԱՆԱՆՑ զօրավարացն մերոց.
4 և 5—Արձակուրդ Բուն Բարեկենդանի.



### ԱՊՐԻԼ

7 Եշ.—Աւետումն Ս. Աստուածածնի.
9 Շբ.—Մուտն ի Վիրապն Ս. Գ. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ.
18-ից մինչև Մայիսի 1-ը—Արձակուրդ ԶԱՏԿԻ.

### ՄԱՅԻՍ

6 Ուրբ.—Ծնունդ Ն. Կ. Բ. փառանգին ՆԻԿՈԼԱՅ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՎԻՉԻ.

### ՅՈՒՆԻՍ

2 Եշ.—ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ Քրիստոսի.
(Ապա ամարային արձակուրդ):

### ՍԵՊՏԵՄԲԵՐ

8 Եշ.—Ծնունդ Ս. Աստուածածնի ի յԱննայէ.
12 Բշ.—Յիշատակ մեռելոց.

### ՆՈՅԵՄԲԵՐ

10 Եշ.—Տարեդարձ օծման վեհափառ հայրապետի ամենայն հայոց Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ա..
14 Բշ.—Ծնունդ Ն. Կ. Մ. ՄԱՐԻԱՅ ՖԵՈԴՈՐՈՎՆԱՅԻ.
21 Բշ.—Ընծայումն Ս. Աստուածածնի ի տաճարն.

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

3 Ճբ.—Սրբազան Առաքելոց և առաջին լուսաւորչացն մերոց ԹԱԴԷՈՍԻ և ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ.

8 Եշ.—Անուանակոչութիւն Վեհափառ հայրապետին ամենայն Հայոց Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ա.․

9 Ուրբ.—Յղութիւն Ս. Աստուածածնի ի յԱննայէ:



# Ա. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

## I. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ (*)

| | | |
|---|---|---|
| Աւստրօ-Վենգրիա | — | — |
| Բելգիա | 5.729 | 1.260 |
| Գերմանիա | 57.000 | 1.570 |
| Դանիա | 2.940 | 1.230 |
| Իսպանիա | 29.828 | 1.060 |
| Մեծ Բրիտանիա | 29.724 | 1.360 |
| Յունաստան | 1.605 | 500 |
| Նիդերլանդ | 3.880 | 1.340 |
| Նորվեգիա | 6.490 | 1.407 |
| Շվեցիա | 9.549 | 1.460 |
| Շվէյցարիա | 4.799 | 1.570 |
| Պորտուգալիա | 3.510 | 460 |
| Ռումինիա | 2.730 | 220 |
| Ռուսաստան | 29.535 | 232 |
| Տաճկաստան | 618 | 200 |
| Ֆրանսիա | 78.456 | 1.471 |

(*) Առաջին սիւնակը ցոյց է տալիս տարրական ուսումնարանների թիւը, երկրորդը՝ թէ 10.000 հոգուց քանիսն է ուսանող:

## II. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

*եւ նշանաւոր տեղերը *)*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աժդարխան (*) . | 69.319 | 1414 | 2018 | — |
| Ալեքսանդրոպոլ | 20.500 | 2276 | 2880 | 197 |
| Ալուշտա . . . . | 770 | 1437 | 1989 | 48 |
| Ախալցխա. . . . | 18.269 | 2175 | 2779 | 189 |
| Ախալքալակ. . . | 3.120 | 2067 | 2741 | 157 |
| Անապա * . . . | 5.357 | 1651 | 2255 | 197 |
| Աշխաբադ . . . . | 3.708 | 2984 | 3756 | — |
| Արդահան . . . . | 1.273 | 2166 | 1842 | 77 |
| Արդուին . . . . | 5.862 | 1912 | 2510 | 111 |
| Արմաւիր . . . . | 6.388 | — | — | — |
| Արմեանսկ. Բազ. | 5.450 | 1217 | 1821 | 133 |

---

*) Առաջին սիւնակը ցոյց է տալիս բնակիչների թիւը, երկրորդը Մոսկուայից, երրորդը Պետերբուրգից և չորրորդը նահանգական քաղաքից ունեցած հեռաւորութիւնը:

**) Նօտր տառերով տպուած են նահանգական քաղաքների անունները. իսկ *-ը նաւահանգիստ քաղաքի նըշան է:



| | | | | |
|---|---|---|---|---|
| Աքքերման . . . | 45.500 | 1456 | 1765 | 163 |
| Բաքու * . . . . | 15.604 | 2389 | 2992 | — |
| Բաթալփաշինսկ | 5.866 | 1816 | 2420 | 358 |
| Բաթում * . . . . | 8.671 | 1801 | 2399 | — |
| Բալակլավա * . . | 695 | 1473 | 2025 | 84 |
| Բաղչեսարայ . . | 13.377 | 1278 | 1986 | 31 |
| Բերդեանսկ * . | 18.180 | 1195 | 1799 | 338 |
| Գանձակ . . . . . | 18.505 | 2212 | 2816 | — |
| Գէօրգիեվսկ. . . | 4.248 | 1622 | 2226 | 866 |
| Գլազով . . . . . | 1.798 | 1201 | 1598 | 210 |
| Գորի . . . . . . | 4.800 | 2057 | 2661 | 71 |
| Գրիգորիոպոլ . . | 8.646 | 1333 | 1605 | 334 |
| Գրոզնիյ . . . . | 6.187 | 1868 | 2472 | 101 |
| Դերբենդ * . . . | 14.750 | 2154 | 2758 | — |
| Դորբաթ . . . . | 29.727 | 876 | 323 | 245 |
| Դուշէթ. . . . . | 3.597 | 1973 | 2577 | 59 |
| Եալթա * . . . . | 3.006 | 1447 | 2043 | 89 |
| Եկատերինոդար . . | 22.432 | 1440 | 2044 | — |
| Եկատերինոսլավ . . | 41.098 | 945 | 1497 | — |
| Եյսկ * . . . . . | 23.725 | 1307 | 1911 | 258 |
| Երեւան. . . . . . | 12.449 | 2277 | 2881 | — |
| Եւպատորիա * . | 13.416 | 1420 | 2018 | 63 |
| Զաքաթալա . . | 1.079 | 2208 | 2812 | 182 |
| Զուգդիդի. . . . | 1.900 | — | — | — |

Էջմիածին . . . . տես՝ Վաղարշապատ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Թագանրոգ * . . | 63.025 | 1132 | 1736 | 419 |
| Թելաւ . . . . . | 7.022 | 2188 | 2792 | 162 |
| Թեմիրխ. Շուրա | 4.383 | 2011 | 2611 | — |
| Թեմրիւք * . . | 10.496 | 1574 | 2178 | 135 |
| Թէոդոսիա * . . | 10.796 | 1463 | 2061 | 106 |
| Թիֆլիս . . . . . | 104.024 | 2026 | 2630 | — |
| Ժելեզնովոդսկ . | 269 | 1673 | 2277 | 223 |
| Լենքորան * . . | 5.320 | 2681 | 3285 | 357 |
| Խարկով . . . . . | 159.660 | 731 | 1335 | — |
| Խերսոն. . * . . . | 60.981 | 1257 | 1733 | — |
| Կաղզուան . . . | 3.702 | 2473 | 3016 | 73 |
| Կարս . . . . . . | 7.342 | 2343 | 2947 | — |
| Կերչ-Ենիկալէ * | 22.449 | 1560 | 2158 | 35 |
| Կիեվ . . . . . . | 127.251 | 846 | 1141 | — |
| Կիսլովոդսկ . . . | 1.722 | 1692 | 2296 | 274 |
| Կվիրիլի . . . . . | 1.314 | 2157 | 2761 | 35 |
| Կրասնովոդսկ * | 333 | 2552 | 3324 | — |
| Հին Նախչեւան. | 5.389 | 2420 | 3024 | 143 |
| Ղազան. . . . . . | 140.726 | 826 | 1430 | — |
| Ղարասու Բազար | 11.877 | 1400 | 1998 | 43 |
| Ղզլար . . . . . | 8.778 | 1839 | 2434 | 240 |
| Ղուբա . . . . . | 13.062 | 2235 | 2838 | 154 |
| Մակարեվ. . . . | 1.516 | 498 | 1172 | 108 |



| | | | | |
|---|---|---|---|---|
## II. Միջին թիւ եկեղեցեաց եւ քահանայից.

### ա) Մի եկեղեցի գալիս է՝

| | | |
|---|---|---|
| Ախալցխայում . . . . . . . . | 418 | տանը. |
| Թելաւում . . . . . . . . . | 377 | „ |
| Գանձակում . . . . . . . . | 316 | „ |
| Սղնախում . . . . . . . . . | 259 | „ |
| Թիֆլիսում . . . . . . . . . | 241 | „ |
| Ախալքալակում . . . . . . . | 200 | „ |
| Գորիում . . . . . . . . . . | 154 | „ |
| Գիւղերում . . . . . . . . . | 49 | „ |

### բ) Մի քահանայի գալիս է՝

| | | |
|---|---|---|
| Ախալքալակում . . . . . | 120 | տուն. (*) |
| Ախալցխայում . . . . . | 119 | „ |
| Թիֆլիսում . . . . . . . | 88 | „ |
| Սղնախում . . . . . . . . | 84 | „ |
| Թելաւում . . . . . . . . | 84 | „ |
| Գանձակում. . . . . . . . | 79 | „ |
| Գորիում . . . . . . . . . | 77 | „ |
| Գիւղերում . . . . . . . . | 46 | „ |

*) Կան նոյնպէս օգնական ու զառամեալ քահանայք, որոնք ծուխ չունին և հաշուուած են վերոգրեալների թուումը:



## III. Դիտողութիւն դաւառաց մասին.

### Ա) Սակաւատուն և անեկեղեցի գիւղերը. (*)

1 Ախալքալաքի գաւառի 60 գիւղի մէջ միայն 4 գիւղն է սակաւատուն, և միայն մի գիւղ կայ, որ եկեղեցի չունի:

2 Ղազախի 50 գիւղի մէջ 2-ը սակաւ. են և մի գիւղ կայ՝ անեկեղեցի:

3 Գորիայ գ.-ի 20 գիւղի մէջ 1-ն է սակաւ. բոլորն էլ եկեղեցի ունին: 12 գիւղ 100-ից աւելի տուն ունի, և 7-ը՝ 50-ից աւելի:

4 Գանջակու գ.-ի 23 գիւղի մէջ ոչ մէկը սակաւատուն չէ, և բոլոր գիւղերն էլ եկեղեցի ունին:

5 Բորչալուի 62 գիւղի մէջ միայն 9-ը սակաւ. են, և 7-ը՝ անեկեղեցի:

*) Սակաւատուն համարւում են այն գիւղերը, որոնց մէջ հայ ծողովրդոց տների թիւր 10-ից աւելի չէ. իսկ պակասը շատ են:

6 **Ախալցխայ** գ.-ի 11 գիւղի մէջ 3-ը սակաւատուն են և անեկեղեցի:
7 **Սղնախի** գ.-ի 5 գիւղի մէջ ոչ մէկը 30-ից պակաս տուն չունի, և բոլորն էլ եկեղեցի ունին:
8 **Քութայիսու** գ.-ի 4 գիւղի մէջ ոչ մէկը սակաւ. չէ, բոլորն էլ եկեղեցի ունին. և ամենաբազմատունն էլ 60-ից աւելի տուն չունի:
9 **Թիֆլիսի** գ.-ի 63 գիւղի մէջ 24-ը սակաւատուն են, և 20-ը եկեղեցի չունին:
10 **Թելավի** գ.-ի 35 գիւղի մէջ 15-ը սակաւատուն են, և 12-ը եկեղեցի չունին:
11 **Դուշեթի** գ.-ի 20 գիւղի մէջ 13-ը սակաւատուն են, և 15-ը եկեղեցի չունին:—

Ամբողջ Թեմի մէջ **Գանձակի** և **Քութայիսի** նահանգներում սակաւատուն և անեկեղեցի գիւղ չկայ: Միայն **Թիֆլիսի** Նահանգի 277 գիւղի մէջ 69-ը սակաւատուն են, և 58-ը՝ անեկեղեցի:

---



Բ) Բազմամարդ գիւղերը,

(որոնք 100-ից պակաս տուն չունին:)

1 Մեծ Շուլաւեր—580 տուն.
2 Վելիսցիխէ—352
3 Ախալքալաք, Գետաշէն } 240—250
4 Փիր, Օձուն, Մուխրան } —200 խւրաքանչիւրը.
5 Ընոդ, Բուլխ, Կոթի, Կարզախ, Բանանց, Կումիս } 150—180
6 Սագարեջոյ, Վազիան, Սուրամ, Ղալաչա, Սև Քար, Կավթիսխև, Կոդը, Ուրիաթուբան, Բադա, Մեծ Դաղէթ, Ջալալ-Օղլի, Կարալէթ, Ջերտ, Չարգախլու, Ցխինվալ—120—140.
7 Բարսում, Ղուլալի, Քախուրէլ, Կուրգան, Ղարադաջ, Չևգվ, Սագխա, Խէթուբան, Ուզունթալա—100—120 (37 գիւղ)

# Է. ԹԻՖԼԻՍԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

## I. Քաղաքային Խորհրդի Իրաւասուները·

### Ա. ԿԱՐԳ

1 Կոմս Մ. Տ. Լոռու Մելիքեան
2 Բարոն Ա. Պ. Նիկոլայի
3 Յ. Ե. Փիթոյեան
4 Ն. Ե. Նիկոլաձէ
5 Ա. Ի. Մանթաշեան
6 Ս. Բ. Խալաթեան
7 Ա. Ֆ. Փրիգոնեան
8 Վ. Կ. Օուլովսկիյ
9 Կ. Մ. Ալիխանեան
10 Ս. Ա. Սլիվիցկիյ
11 Գ. Մ. Թամամշեան
12 Ս. Յ. Անանեան
13 Իշխան Ա. Ջ. Չելոկայեվ
14 Ն. Ջ. Միրզոյեան
15 Վ. Ի. Կայդանով
16 Յ. Ս. Ղորղանեան



17 Մ. Յ. Թամամշեան
18 Կ. Մ. Կոլուբանսկիյ
19 Ա. Գ. Այվազեան
20 Ե. Ս. Բաբեան
21 Ա. Ա. Խարազեան
22 Յ. Յ. Թովիանեան
23 Բ. Ի. Ստատկովսկիյ
24 Գ. Բ. Տէր Աստուրեանց

### Բ. ԿԱՐԳ

1 Իշխան Գ. Թումանեան
2 Ս. Վայս Ֆօն Վայսենհով
3 Յ. Խատիսեան
4 Գ. Եղանգուլեան
5 Ա. Մատինեան
6 Կ. Ռախմանին
7 Իշխ. Կ. Բեհբութեան
8 Ն. Վերմիշեան
9 Ն. Զուբալով
10 Վ. Դինգել՛շտէյտ
11 Ա. Յովհաննիսեան
12 Մ. Ճահպարոնեան
13 Դ. Օբէլի
14 Միքայէլ Գոլուխանեան
15 Ա. Իվանենկօ

16 Գ. Գւլավացկիյ
17 Իշխան Վ. Ջորջաձէ
18 Յ. Չիլթախեան
19 Մարկոս Գոլուխանեան
20 Գ. Ծարալեան
21 Մ. Թոտինեան
22 Գ. Քիւչարեան
23 Գ. Տուրինեան
24 Յ. Մուլմաֆեան

## Գ. ԿԱՐԳ

1 Գ. Իզմայիլեան
2 Գ. Քարթվելով
3 Ե. Դաւթեան
4 Գ. Փուղինեան
5 Ի. Բուզդանեան
6 Ն. Փրիգոնեան
7 Վ. Կանդուրալեան
8 Գ. Ղորղանեան
9 Գ. Փրիգոնեան
10 Ե. Խոսրովեան
11 Մ. Ամբարդանեան
12 Ն. Գզոյովեան
13 Ս. Բաբանեան



14 Ս. Իզմիրեան
15 Գ. Ճահբուդաղեան
16 Ն. Գարսոյեան
17 Վ. Միքելաձէ
18 Գ. Սունդուկեան
19 Գ. Թոտինեան
20 Յ. Տուրինեան
21 Ն. Աթաբեկեան
22 Լ. Մելիք Բէկլարեան
23 Գ. Մելիք Ղարագեօզեան
24 Մ. Մաչաբելի.

Այս 72 իրաւասուները ըստ ազգութեան են՝ 52 հայ, 10 ռուս, 8 վրացի, 2 գերմանացի:

Սոցանից 43-ը ստացել են բարձրագոյն համալսարանական կամ մասնագիտական ուսում, 18-ը՝ միջնակարգ և 11-ը տարրական ուսում:

## II. Հայոց եկեղեցիքը.

| | Շինութեան թուականը. | Վերանորոգ. թուականը. |
|---|---|---|
| 1 Կաթողիկէ Ս. Աստուածածին | 1037 | — |
| 2 Մողնւոյ Ս. Գէորգ | 1400 | 1868 |
| 3 Ս. Կարապետ | 1400 | — |
| 4 Վանաց Ս. Աստուածածին | 1480 | 1801 |
| 5 Ս. Հրեշտակապետք | 1480 | — |
| 6 Բեթղեհեմի Ս. Աստուածածին | 1500 | 1740 |
| 7 Քարափի Ս. Գէորգ | 1600 | — |
| 8 Չորաբաշի Ս. Գէորգ | 1600 | — |
| 9 Ս. Մինաս | — | 1882 |
| 10 Ս. Նշան | 1703 | — |
| 11 Կուսանաց Ս. Ստեփանոս | 1728 | 1868 |
| 12 Խոջիվանքի Ս. Աստուածածին | 1760 | — |
| 13 Ս. Սարգիս | 1770 | 1865 |
| 14 Աւետեաց (Ջգրաշէն) Ս. Աստուածածին | 1792 | — |
| 15 Նորաշէն Ս. Աստուածածին | 1800 [1] | — |
| 16 Ճամքորեցոց Ս. Աստուածածին | 1844 | — |
| 17 Էջմիածնեցոց Ս. Գէորգ | 1846 | — |
| 18 Զուղուրեթի Ս. Աստուածածին | 1849 | — |
| 19 Նաւթլուղի Ս. Գէորգ | 1853 | — |
| 20 Վերայի Ս. Խաչ | 1855 | — |
| 21 Ս. Գրիգոր Լուսաւորիչ | 1867 | — |
| 22 Թանգոյեանց Ս. Աստուածածին | 1868 | — |
| 23 Կուկիոյ Նորաշէն Ս. Աստուածածին | 1872 [2] | — |
| 24 Տափի Թաղի (Քամոյեանց) Ս. Գէորգ | — | — |
| 25 Ջրկինեանց Ս. Կարապետ | — | — |



[1] Մօտաւորապէս:

[2] Մօտաւորապէս:

## III. Երեսփոխանները.

| | Ստացած ձայն. |
|---|---|
| 1 Մարտիրոս ք. Ամիրխանեանց՝ պաշտօնակատար երեսփոխանի . . . . . . . . . . . . | 2 |
| 2 Գասպար Նահապետեանց . . | 4 |
| 3 Միքայէլ Քոչարեանց . . . . | 2 |
| 4 Իսահակ Բուղդանեանց . . . | 1 |
| 5 Հայրապետ Ղամարեանց. . . | 2 |
| 6 Յովսէփ Տ. Աբրահամեանց. . | 6 |
| 7 Իսահակ Ամիրեանց . . . . . | 8 |
| 8 Խաչատուր Աբասեանց. . . . | 7 |
| 9 Նազար Ղազարեանց . . . . | 4 |
| 10 Յովհաննէս Տէր Կարապետեանց. . . . . . . . . . | 3 |
| 11 . . . . . . . . . . . . . . . | — |
| 12 . . . . . . . . . . . . . . . | — |
| 13 Վանահայր Յովհաննէս վարդապետ Ճիրակունի . . . . | 4 |
| 14 Նիկողայոս Միրվէլեանց. . . | 8 |



| | |
|---|---|
| 15 Կոստանդին Յարութիւնեանց | 4 |
| 16 Գրիգոր Ղարագեօզեանց . . | 7 |
| 17 Յարութիւն Տ. Ղէոնդեանց. | 1 |
| 18 Յարութիւն քահ. Տ. Զաքարեանց՝ պաշտօնակատար երեսփոխանի . . . . . . . | 2 |
| 19 Արտաշէս Մամիկոնեանց . . | 3 |
| 20 Վարդան Միրզոյեանց . . . | 3 |
| 21 Գէորգ Նազարեանց. . . . . | 1 |
| 22 Գրիգոր Գոլոշեանց . . . . . | " |
| 23 Եսայի Աբրահամեանց . . . . | 1 |
| 24 Գէորգ Աքիմեանց . . . . . | 5 |
| 25 Ներսէս Աթաբէկեանց. . . . | 1 |

*) Երեսփոխանաց ազգանունները դասաւորուած են եկեղեցեաց անուանց դասաւորութեան համապատասխան։

## IV. Հայ Քահանայք.

1 Աղեքսանդր ք. Վարդանեանց
2 Անտոն ք. Տ. Խաչատրեանց
3 † Աշոտ ք. Թեմուրազեանց
4 Առաքել ք. Ազիզեանց
5 *° Արսէն ք. Բագրատունի
6 Բաղդասար ք. Ղամազեանց
7 Բարթողիմէոս ք. Մարկոսեանց
8 Բարսեղ ք. Տ. Բարսղեանց
9 Գաբրիէլ ք. Ջիւանեանց
10 *† Գաբրիէլ ք. Տ. Գաբրիէլեանց
11 † Գարեգին ք. Առաքելեանց
12 Գէորգ ք. Աբուլեանց

---

Ծանօթ.—†*-ով նշանակուած են այն քահանայից ազգանունները, որոնք Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրանոցի ուսման ընթացքը աւարտել են 1870 թուականից սկսեալ, կամ ստացել են բարձրագոյն կրթութիւն, ուսուցչական պաշտօն են վարել և գրաւոր վաստակներ ունին: Իսկ եթէ այդպիսիք գրաւոր վաստակ չունին, †:

°-ով նշանակուած են նոցա անուն-



13 Գէորգ ք. Գալստեանց
14 ° Գէորգ ք. Գնունի
15 Գէորգ ք. Տ. Աւետիսեանց
16 ° Գէորգ ա. ք. Տէրտէրեանց
17 †* Գիւտ ք. Աղանեանց
18 † Գրիգոր ք. Խոջայէնիաթեանց
19 Գրիգոր ք. Կախոյեանց
20 ° Գրիգոր ք. Մանդակունի
21 Գրիգոր ք. Մատինեանց
22 ° Գրիգորիս ք. Մատինեանց
23 † Գրիգոր ք. Ճերմազանեանց
24 ° Գրիգոր ք. Տ. Բարսղեանց
25 Դաւիթ ք. Գիրգիդեանց
26 †* Եզնիկ ք. Երզնկեանց
27 ° Եղիշէ ք. Տ. Գրիգորեանց
28 Եսայի ք. Մեհրաբեանց
29 Եսայի ք. Տ. Նիկողոսեանց
30 Թադէոս ք. Իվոյեանց

---

ները, որոնք թէպէտ ուսուցչական պաշտօն վարել են, բայց կամ 1870 թ.-ից առաջ են աւարտել Ն. Ա. Հ. Դ.-ի ուսման ընթացքը, կամ ամենևին չեն աւարտել:

31 Խաչատուր ք. Տ. Խաչատրեանց
32 Կոստանդին ք. Արարատեանց
33 ° Համազասպ ք. Տ. Յովհաննիսեանց
34 †* Ղազարոս ք. Յովսէփեանց
35 Ղազարոս ա. ք. Պալի-Գալֆայեանց
36 °* Ղեւոնդ ք. Խարազեանց
37 Մարտիրոս ք. Ամիրխանեանց
38 Միքայէլ ա. ք. Սիմէոնեանց
39 ° Մուշեղ ք. Տ. Ղեւոնդեանց
40 Յակոբ ք. Ջառափեանց
41 ° Յարութիւն ա. ք. Սուզանաճեանց
42 Յարութիւն ք. Տ. Զաքարեանց
43 ° Յովհաննէս ք. Մարտիրոսեանց
44 Յովհաննէս ք. Պապոյեանց.
45 Յովհաննէս ք. Տ. Գրիգորեանց
46 Յովհաննէս ա. ք. Տ. Դաւթեանց
47 Յովհաննէս ք. Տ. Մխիթարեանց
48 Յովհաննէս ք. Տ. Յակոբեանց
49 Ներսէս ա. ք. Աբովեանց
50 ° Ներսէս ք. Ղամազեանց
51 Ներսէս ք. Տ. Բարսղեանց
52 Շմաւոն ք. Տ. Առաքելեանց
53 Շմաւոն ք. Տ. Բարսղեանց
54 Պետրոս ք. Երանոսեանց
55 † Սահակ ք. Սահակեանց



56 °* Սարգիս ա. ք. Աղաջանեանց
57 ° Սարգիս ք. Բէկնազարեանց
58 ° Սարգիս ք. Իգլիթեանց
59 Սարգիս ք. Փիրոյեանց
60 Սիմէոն ք. Աբրահամեանց
61 Սիմէոն ք. Չմշկեանց
62 Ստեփանոս ք. Շահբասեանց
63 ° Ստեփանոս ք. Սամուէլեանց

---

## V. Հասարակական Գրադարանը

Բ ա ց է

Ապրիլի 1-ից մինչև Հոկտեմբերի 1-ը. 2—6 ժամը:

Հոկտեմբերի 1-ից մինչև Ապրիլի 1-ը. 12—5 ժամը:

(Բացի կիրակի և տօն օրերից:— Մուտքը ձրի է:

### Կովկասեան Թանգարանը

Բ ա ց է

Երեքշաբթի, Ուրբաթ և Կիրակի օրերը. 10—3 ժամը:

Մուտքը 20 կոպէկ է:

# Զ. ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ.

| Թուականը. | ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԸ | Հրատարա-կութեան տեղը. |
|---|---|---|
| 1799 | Տարեգրութիւն. . . | Վենետիկ |
| 1803 | Եղանակ Բիւզանդեան. . . . . . | " |
| 1807 | Յիշատակարան . . | " |
| 1812 | Դիտակ Բիւզանդեան. . . . . . . | Կ. Պոլիս |
| 1831 | Լրոյ Գիր Օսմանեան Պետութեան . . | " |
| " | Հայելի . . . . . . . | Կալկաթա |
| " | Ազգարար . . . . . | Մադրաս |
| 1838 | Ճռեմարան Պիտանի Գիտելեաց . . | Զմիւռնիա |
| 1840 | Արշալոյս Արարատեան. . . . . . | " |



| | | |
|---|---|---|
| 1840 | Ազգարար Բիւզանդեան. . . . . . | Կ. Պոլիս |
| *1843 | Բազմավէպ . . . . | Վենետիկ |
| 1844 | Հայրենասէր. . . . | Զմիւռնիա |
| 1845 | Ազգասէր . . . . . | Կալկաթա |
| " | Աւետաբեր . . . . | Կ. Պոլիս |
| " | Երևակ, ապա Ջոհալ. | " |
| 1846 | Կովկաս. . . . . . | Թիֆլիս |
| " | Մուրհանդակ Կ.Պոլսոյ, ապա Հայաստան . . . . . . . | Կ. Պոլիս |
| 1847 | Եւրոպա. . . . . . | Վիեննա |
| 1848 | Մուրհանդակ Բիւզանդեան. . . . | Կ. Պոլիս |
| " | Բանասէր . . . . . | Մադրաս |
| " | Ուսումնասէր . . . | Սինգափուր |
| 1850 | Արարատ . . . . . | Կ. Պոլիս |
| 1851 | Բանասէր . . . . . | " |
| " | Հայրենասէր. . . . | Նիկոմիդիա և Փարիզ |
| " | Բուրաստան . . . . | Կ. Պոլիս |
| *1852 | Մասիս . . . . . . . | " |

*) Աստղանիշ (*) կրող լրագիրք հրատարակւում են և՛ այսօր։

| | | |
|---|---|---|
| 1852 | Նոյեան Աղաւնի | Կ. Պոլիս |
| 1853 | Արփի Արարատեան | Զմիւռնիա |
| 1855 | Աստղիկ Արեւելեան | Կ. Պոլիս |
| ” | Արծուի Վասպուրական | Կ. Պոլիս և Մուշ |
| ” | Մասեաց Աղաւնի | Փարիզ |
| ” | Մեղու Հայաստանի | Թիֆլիս |
| 1859 | Մեղու | Կ. Պոլիս |
| ” | Ճռաքաղ | Մոսկուա |
| 1860 | Թուլթակ Հայաստան Աշխարհի | Զմիւռնիա |
| ” | Սէր | Կ. Պոլիս |
| ” | Միւլթիւն | Զմիւռնիա |
| — | Յաւերժահարսն | ” |
| — | Գարուն Հայաստանի | ” |
| — | Դիմակ | ” |
| * ” | Հիւսիսափայլ | Մոսկուա |
| * ” | Փունջ | Կ. Պոլիս |
| ” | Սիոն | Երուսաղէմ |
| * ” | Մանզումէյ Էֆքեար | Կ. Պոլիս |
| 1861 | Համբաւաբեր Ռուսիոյ | Մոսկուա |



| | | |
|---|---|---|
| 1861 | Ծաղկոցաձոր | Փարիզ |
| ” | Կլիթառ | Կ. Պոլիս |
| — | Փունջ, Օրագիր, Նորագիր, Լրագիր, Թատրոն, Երկրագունտ, Ծաղիկ | Կ. Պոլիս և այլուր |
| 1863 | Ժամանակ | Կ. Պոլիս |
| ” | Կռունկ Հայոց Աշխարհի, ապա Ծիլն Աւարայրի | Թիֆլիս |
| 1864 | Արծուիկ Տարօնոյ | Մուշ |
| 1867 | Հայկական Աշխարհ | Թիֆլիս |
| ” | Գարուն և Վաճառական | ” |
| *1868 | Արարատ | Ս. Էջմիածին |
| 1869 | Յոյս | Արմաշ |
| *1871 | Լոյս և Հայրենիք | Կ. Պոլիս |
| ” | Արեւելեան Մամուլ | Զմիւռնիա |
| *1872 | Մշակ | Թիֆլիս |
| * ” | Աւետաբեր Մանկանց | Կ. Պոլիս |
| 1874 | Դպրոց | Ս. Էջմիածին |

| | | |
|---|---|---|
| 1876 | Փորձ . . . . . . . . | Թիֆլիս |
| *1877 | Թերճիմանը Էֆքեար . . . . . . . | Կ. Պոլիս |
| 1879 | Մանկավարժական Թերթ . . . . . | Թիֆլիս |
| *1881 | Ծիւրակն . . . . . | Կ. Պոլիս |
| *1882 | Արձագանք և Աղբիւր . . . . . . | Թիֆլիս |
| „ | Վարժարան . . . . | „ |
| *1882 | Ծուրաստան Մանկանց . . . . . . | Կ. Պոլիս |
| * „ | Շարժում . . . . . | „ |
| *1883 | Երկրագունտ . . . | „ |
| *1884 | Արևելք . . . . . . . | „ |
| * „ | Խիկար . . . . . . . | „ |
| * „ | Նոր Դար . . . . . | Թիֆլիս |
| * „ | Ճերիտէյ Շարգիե . | Կ. Պոլիս |
| * „ | Մեճմուայ Ախպար . | „ |
| * „ | Աւետաբեր . . . . | „ |
| *1885 | Գիտական Շարժում | „ |
| * „ | Հնչակ . . . . . . . | „ |
| *1886 | Ճաշակ Ոսկեղէն Դպրութեան . . | „ |
| * „ | Մենտոր . . . . . | Այնթապ |
| * „ | Արմենիա . . . . . | Մարսէյլ |



| | | |
|---|---|---|
| *1887 | Լեզու. . . . . . . . | Կ. Պոլիս |
| * „ | Հանդէս Ամսօրեայ. | Վիեննա |
| * „ | Երասխ. . . . . . . | Ս. Պետերբուրգ |

—Փարոս (Մոսկուա), Առողջապահական Թերթ, Պսակ, Երևանեան Յայտարարութիւններ (Երևան), Մանկավարժանոց (Ախալցխա և Ս. Պետերբուրգ), Գործ (Շուշի), Աշխատանք (Թիֆլիս)։

# Է. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

## 1. ՄԱՐԴՈՒՍ ԿԵԱՆՔԻ ԲՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԸ.

Անյիշատակ ժամանակներից սկսած՝ մտածող մարդիկ ջանացին որոշել մարդկային կեանքի բնական չափն ու սահմանը։ Գեզիոդը հաշւում է, թէ ագռաւը ապրում է մարդուց ինն անգամ աւելի, եղնիկը ագռաւից—չորս անգամ աւելի և այլն. և այս հաշիւը շարունակում է նա մինչև փիւնիկս թռչունը և ծովահարսը, որոնց գոյութեանը չէր կարելի չհաւատալ այն ժամանակ։ Պլինիոսն աւանդում է մեզ Պետեզիրիսի կարծիքը, թէ կարելի է Իտալիոյ մէջ ապրել մինչև 144 տարի. յետոյ յայտնուեցաւ Էսկուլափի ուսումը, որ պնդում էր, թէ կեանքի սահմանը չափուած է համաստեղութիւններով։ Այս



ուսման հետևողները այն կարծիքի էին, թէ երկարակեցութեան օրինակները հազուագիւտ են այն պատճառով, որ շատ մարդիկ ծնւում են լուսնի վերջերը, և ապրելով վտանգաւոր տարիների ազդեցութեան տակ, չեն կարող 54 տարուց աւելի երկարակեաց լինել։ Էպիկէն չէր հաւատում, որ մարդ կարողանայ ապրել մինչև 112 տարի, Բերոզը—117 տարի։ Էտրուսկների սրբազան մատեանը կեանքի բնական չափը սահմանում էր 12 եօթնամեակի կամ 84 տարիների։ Սողոնը նոյնպէս հաւատ էր ընծայում եօթնամեայ շրջաններին, որոնք, նորա հաշուովը, մարդու կեանքի մէջ տասն էին, այսինքն 70 տարի։ Պտղոմէոսի, Կարտոնի, Արկոլի և այլ հնադարեան իմաստասէրների կարծիքով մարդու կեանքի տևողութեան վերայ ազդում է մոլորակների ունեցած դրութիւնը նորա ծննդեան վայրկենին։ Նոյն իսկ չափաւորութիւն սիրող Կոռնարոն հարիւր տարուայ կեանքը համարում էր վերջին սահման և հաւատում էր համաստեղութեանց մարդու

ճակատագրի վերայ ունեցած ազդեցութեանը: Բայց, նորա կարծիքով, չափաւորապէս ապրելով, կարելի է նշանաւոր կերպով յետաձգել մահուան տրխուր վայրկեանը: „Երկինքը ունի ազդեցութիւն, բայց դէպի չարը չէ գործածում այն“, ասում էր նա: Նոր կարծիքների մէջ նշանաւոր է Բուտոի յայտնածը. Նա գտնելով որ օրգանական կեանքը ենթարկուած է խիստ մատեմատիքական օրէնքներին և ճանաչելով 3 թիւը իբրև հիմնական թիւ, կեանքի ամէն մի շրջանին տուեց $3^2=9$ տարի, իսկ բոլոր կեանքը արտայայտեց այս ձևով՝ $9^2=81$ տարի:

Բուրտախ, գերմանացի երևելի բնաբանը բնական կեանքի չափը հաշւում էր 4000 եօթնեակի, կամ 76 տարու, 3 շաբաթուայ և 3 օրուայ: Մեր ժամանակը գաղղիացի ուսումնական Ֆլուրանը կազմուածքի զարգացման գործողութեան վերջանալու ճիշդ նշանը գտաւ ոսկորների կատարելապէս աճման և միաւորութեան մէջ, որ մարդու մէջ աւարտւում է մինչև 20 տա-



րին, ձիու մէջ՝ 5 տարին, առիւծի՝ 4 տարին, շան՝ 2 տարին: Բազմապատկելով այդ թուերը 5 անգամ, գտնում ենք որ ձին ապրում է 25 տարի, առիւծը՝ 20, շունը՝ 10—12 և այլն. այսինքն զարգացման շրջանից 5 անգամ աւելի: Եւ այսպէս, բնական կանոնով մարդուս կեանքը պէտք է երկարի 100 տարի: Մարդուս ծերութիւնը Ֆլուրանը սկսում է 70 տարուց: Նորա կարծիքով ծերութեան յատկանիշներն են՝ պատրաստ ունեցած ուժի կորցնելը՝ առանց նորը ձեռք բերել կարողանալու:

## 2. ՕԴԸ՝ ՈՐՊԷՍ ԱՂԲԻՒՐ ԿԵՆԱՑ.

Մի անգղիացի բժիշկ ասում էր, որ եթէ նորան առաջարկէին անպիտան կերակուր և անպիտան օդ, նա կ'ընտրէր առաջինը՝ իբրև երկու չարեաց փոքրագոյնը:

Մեր կեանքի ընթացքը առաւել երկար և ախորժ անելու ամենաճիշդ միջոցը անտարակոյս այն կը լինէր, որ ամէն մարդ սովորէր կանոնաւոր շունչ

առնել, որ նա, աւելի ուղիղ խօսելով, ենթարկէր իրան շնչառական մարմնավարժութեանը. որովհետև մինչև այժմ մարդկային ազգը շունչ է առնում մեքենայապէս, առանց հասկանալու, անչափ, անհաշիւ:

Գերմանացի բժիշկ Լիւտտերբախը, որ նուիրել էր իրան շնչառութեան գործարանների ուսումնասիրութեանը, [illegible] եղանակ է առաջարկում օդը ներշնչելու և արտաշնչելու համար: „Կեանքը և կրակի բոցը նորանով են նման միմեանց, ասում է Պիւվիէ, որ նոցանից ոչ մէկը և ոչ միւսը գոյութիւն չունին առանց օդի“:

Շնչառութիւնը կատարւում է գիշեր ցերեկ, քնած ժամանակ, ծնուելու վայրկենից մինչև վերջին շունչը: „Օդը շնչառութեան հացն է“, ասաց Մաքս Սիմոն բժիշկը: Եւ եթէ օդը սնունդ է տալիս կեանքի լապտերին, հարկաւոր է, որ նա բոլորովին մաքուր լինի, որ նորա մէջ ոչինչ վնասակար խառնուրդներ չլինեն:

Թռչունները, չնայելով իրանց արագ



աճմանը և սեռական անչափաւորութեանը, համեմատաբար մարդուց երկար են ապրում, և այդ իսկապէս այն պատճառով, որ նոքա ծծում են մաքուր օդ: Թռչնոց թոքերի մակերեւոյթը բազմաթիւ ծակերով հաղորդակցութիւն ունի մարմնի բոլոր մասների հետ, մինչ անգամ ոսկորների և փետուրների հետ: Ընտանի թռչունները, որ գետնից չեն բարձրանում, աւելի պակաս են ընդունակ երկար ապրելու, համեմատելով այն տեսակների հետ, որոնք բարձր տեղեր են բնակում և օդի առաւել բարձր խաւերումն են թռչում:

* * *

Ծաղկներից բարձրացած ցնդական նիւթերը ոչ միայն ապականում են օդը, այլ և, եթէ նոքա հաւաքուեն նեղ ու փակուած բնակարաններում, կարող են թունաւորիչ դառնալ մարդուս համար:

Դաբնիի վարդագոյն ծաղիկը գիշերը

ննջարանում դրած՝ մահ է պատճառել այնտեղ քնողներին:

Լոնդոնում մի կին մեռած գտնուեցաւ անկողնի մէջ. նորա մահը առաջ էր եկել փոքրիկ ննջարանում դրուած շուշանների բուրմունքից:

Բժշկապետ Տրիլերը մի աղջիկ է տեսել՝ մանուշակի հոտից մեռած:

Մի քանի տեսակ պտուղների հոտը նոյնպիսի ներգործութիւն ունի, ինչպիսին՝ ծաղկանց հոտը:

Լինում մի կին իւր ննջարանում մի քանի զամբիւղ դեղձ էր թողել, որով միւս օրը քաղցրաւենի պէտք է պատրաստէր. բայց առաւօտը նորան մեռած գտան ննջարանում:

Սերկեւիլի սաստիկ հոտն էլ կարող է նոյն հետեւանքները առաջ բերել: Մի կին այդ պտղից մեծ քանակութեամբ դրել էր իւր սենեակում: Բրացիները նորան կիսամեռ դրութեան մէջ գտան այնտեղ:

*
* *



Քանի մի ծաղկանց բուրմունքը սաստիկ է ներգործում ջղերի վերայ, մանաւանդ զգայուն կանանց ջղերի:

Սամուէլ Լիվել բժշկապետը տեսել է մի կին, որ կարմիր վարդի հոտից ուշաթափ էր լինում. իսկ Իննովկենտիոս Փ. պապի Ջաքքիա անունով բժշկապետը չէր կարողանում տանել սպիտակ վարդի հոտին:

Բրաքիոն ծաղկի հոտը սաստիկ գլխացաւ է առաջ բերում:

Նունուֆարը բացի գլխացաւից՝ աչքացաւ էլ է առաջ բերում:

Մաքուր օդը անգին գանձ է ամէն հասակի մարդու, մանաւանդ օգտակար է երեխաների ու ծերերի համար:

Մանկանց ստէպ շարժողութիւնները և նոցա երակների մէջ արեան արագ պտըտուիլը մթնոլորդային օդի մի առատ հոսանք են պահանջում դէպի թոքերը: Չէ կարելի չգովաբանել այն մայրերին, որոնք սովոր են իրանց մանկանց օրօրոցներն ու անկողինները ամէն կողմից վարագոյրերով պատպարելու, որով խեղճերը ստիպուած են լի-

նում փչացած ու խեղդուկ օդով սնանիլ: Երեխան քնած ժամանակը իւր ամբողջ կրծքով պէտք է շունչ առնի: Ամէն օր, ամէն եղանակին, մաքուր օդում զբօսնուլը անհրաժեշտ պայման է, մանաւանդ քաղաքներում բնակող երեխաների առողջ լինելուն: Արևի ճառագայթներն էլ շատ օգտակար են նոցա, եթէ սաստիկ չեն այրում:

## 3. ԼՈՅՍԸ ԵՒ ՋԵՐՄՈՒԹԻՒՆԸ.

Երբ բնութեան Մեծ Արարիչը ասաց՝ „Եղիցի լոյս“, Նա կեանք տուեց աշխարհին:—Առանց լոյսի բոյս և անասուն կը թառամեն, կը մեռնեն:

Ցուրտ ու մութ տեղ դրուած բոյսը ձգւում է դէպի այն կողմը, որտեղից խփում է արևի լոյսը: Եթէ մի ծաղիկ դնենք երկու լուսամուտ ունեցող սենեակի մէջ, նա կը դառնայ դէպի առաւել շատ լոյս ունեցող լուսամուտը:

„Բոլոր ծաղիկների մէջ, ասում է մի բանաստեղծ, կեանքի ծաղիկը ամենից աւելի է կարօտ արևի“: Մեր բնակած



տեղերը որչափ շատ տաքանան արևով, այնչափ աւելի առողջարար կը դառնան: Ամէն մարդ գիտէ սպանիական առածը թէ՝ „Ուր արևը չէ մտնում, այնտեղ յայտնւում են հիւանդութիւնը և բժիշկը“: Կարելի է ասել, որ ամենաառողջարար տունը ապակուց շինուածը պէտք է լինէր, որի մէջ ցանկանում էր ապրել յոյն փիլիսոփան:

Յայտնի է որ մթութեան մէջ մնացած բոյսերը գունատ, թոյլ ու անհամ են և անկարող պտղաբերութեան: Լոյսի ազդեցութիւնից զրկուած՝ նոքա չեն կարողանում դուրս տալ թթուածինը, որ բոյսերի կազմուածքի ամենանշանաւոր մասն է կազմում:

Այդպիսի երևոյթներ կարելի է նկատել նաև մարդու վերայ: Լոյսի բացակայութիւնը, մանաւանդ եթէ նորա հետ միանան նաև խոնաւութիւն, օդի անմաքրութիւն և ցուրտ, ամենավտանգաւոր հիւանդութեանց պատճառ կը դառնայ: Այն մարդը, որ իւր կեանքի մի մասը վատ լուսաւորուած տեղերումն է անց կացրել, շունչ է առ-

նում դժուար ու սակաւ, ուրեմն և անընական: Լոյսի նուազութիւնը արգելում է նաև գոլորշիի բարձրանալը մարմնի վերայից: Յետոյ երևում են արեան պակասութեան հետևանքները՝ մարմնի գունատութիւն և հոգևոր ու մարմնաւոր ոյժերի տկարութիւն:— Լոյսից զրկուած երեխայք կորցնում են իրանց բնական աշխուժութիւնը, մեծանում են դանդաղ և զարգանում են անկանոն կերպով:

Բնութիւնը սերտ կապերով լոյսը և ջերմութիւնը միացրել է միմեանց հետ, այնպէս որ մի քանի դէպքում դժուար է մէկի ներգործութիւնը որոշել միւսինից: Սակայն կայ մի մեթոդ, որ մենք այժմ անտես ենք առնում, բայց որ իւր մէջ միացնում է օդի, լոյսի և ջերմութեան ազդեցութիւնը: Այդ մեթոդը, որ հին ժամանակները ընդհանուր գործածութիւն ունէր, կոչւում է insolatio (արևային բաղանիք): Յունաստանում, ինչպէս Պղատոնը պատմում է, ծեր մարդիկ սովորութիւն ունէին բոլորովին մերկ ու բոբիկ ման



գալու արևի տակ, ծծել տալով իրանց մէջ բարելի ճառագայթները: Հռոմում շատ տանիքների վերայ շինուած էին ճեմելու համար առանձին տափարակ տեղեր, որ solarium (արևօթիկ) էին կոչւում. և յատկապէս նշանակուած էին արևային բաղանիքների համար: Պլինիոս Կրտսերը Հռոմի Սպուրինա անունով քաղաքացու կենցաղավարութիւնը պատմելիս ասում է որ այս ծերունին ամէն օր, ձմեռը 9 ժամին և ամառը 8 ժամին առաւօտեան բոլորովին մերկ ման էր գալիս իւր solarium-ի վերայ: Ցելիուս-Աւրելիանոս բժշկապետը, որ ժամանակակից էր Գալենի, գովեստով է խօսում արևային բաղանիքների մասին և նոցա բուժիչ ներգործութեան վերայ շատ հիւանդութեանց դէմ: Նա խորհուրդ էր տալիս այնպէս գործ ածել այդ բաղանիքները, որ մարմնի բոլոր մասները գտնուէին արևի ճառագայթների միակերպ ներգործութեան տակ, բացի գլխից, որ ծածկուած պէտք է մնար:

Ավիցեննա անունով արաբացի հրա-

չակաւոր բժիշկը և փիլիսոփան, որ մեզնից 9 դար առաջ էր ապրում, արեւային բաղանիքներին նոյնպէս նշանաւոր բուժիչ զօրութիւն է վերաբերում: „Ո՛վ որ իրան ենթարկում է արևի ճառագայթների ներգործութեանը և միևնոյն ժամանակ օդի մէջ շատ շարժողութիւններ է անում, նա ազատ է մնում շատ տեսակ հիւանդութիւններից“, ասում է նա: Զգուշանալու է միայն արևի տակ անշարժ մնալուց և և սովորելու է աստիճանաբար նորա ճառագայթների ներգործութեանը:

Մեր ժամանակի սովորութիւնները և հիւսիսային ցուրտ երկրների կլիման չեն ներում մեզ արևային բաղանիքները կանոնաւոր գործ ածել, ինչպէս անում էին յոյները և հռոմայեցիք: Յայտնի բժշկապետ Մ. Լ. Թիւրքը դոցա տեղ առաջարկում է գործ ածել արուեստական կերպով տաքացրած օդային բաղանիքներ, որոնց մասնակցէր նաև արևի լոյսը: „Այսպիսի բաղանիքները, ասում է նա, որ պէտք է առանձին բնակարաններում շինուած



լին ջերմոցի նմանութեամբ, եթէ գործ ածուին, կարող են պահպանել մեզ շատ տկարութեանց դէմ և օժանդակել կեանքի երկարանալուն“: Աւելացնենք մեր կողմից, որ նոցա գործածութիւնը շատ օգտակար կը լինէր նիհարների, ծերերի, կանանց և սակաւարիւն մարդկանց, այլև այն մարդկանց համար, որոնք անչափաւորութիւնով կորցրել են իրանց ոյժը, ինչպէս և հիւանդ ու թոյլ երեխաներին:

---

## Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Մայիսի 6-ը պէտք է ունենայ *:
Յուլիսը 31 օր ունի:
Նոյեմբերի 23-ից յետոյ պէտք է լինի 24:

## ՏԷՐՏԷՐ

Աղքատի օրդի, պեյլիսըզ մարդ իմ,
Տուն-տեղ, միւլք, բստակ ճփ պիտ՝ ու-
նենամ,
Խըղմեթքեար լալու ցանկութիւն չու-
նիմ,
Ի՞նչ անիմ: Լայլած՝ տէրտէր պիտի՝լամ:

Մարդիք պալապան տուներու տէրին,
Ստակ ալ շատ ունին—հելալ եա հա-
րամ.
Ես քաղցած, չըպլախ—վա՜յ խեղճ ան-
տէրին—
Ի՞նչ անիմ: Լայլած՝ տէրտէր պիտի՝լամ:

Աղքատը, կիտիք, կուտէ իշտահո՜վ
Սաղ տարին աղած միս ու չոր թառան.
Անուշ ուտելիք տուն կուգայ ինչո՜վ.
Վա՜յ կուտայ բստակ: Սրի, տէրտէր՝լամ:



Աղքատին սիրտը չուզէ՞ օղլուշախ,
Հասակէկ իրիցկին՝ մանթիլը վըրան,
Չորս-հինգ հատ զաւակ, տեսօք, ցա-
պալախ...
Ի՞նչ անիմ: Լայլած՝ տէրտէր պիտի՝լամ:

Տէրտէր՝լամ ամա՝ կիր-կարդում չիտիմ,
Աս պօյիս ես ճփ սորվիմ շարական...
Ատալ որ չեղաւ՝ հապա ինչ անիմ:
Չէ, կենէ լայլած տէրտէր պիտի՝լամ:

Կիր-կադում, ուսում—ան պո՜շ պա-
ներ ին,
Ու մեր ատենը հէչ չին պէտքականայ.
Ցած հօգի, ծուռ վիզ պէտք է տէր-
տէրին...
Է՜հ, ադպէս է նը՝ ես տէրտէր կը՝լամ:

Տէրտէր որ էղաւ՝ ա՜լ հարցնող չիկայ՝
Վա՜յ ու ինչ իմ ես, աղէկ կը կարդամ.
Երգ-փոխի համար տիրացու խոմ կա՜յ:
Չէ՞, քարն ալ ճաթի, ես տէրտէր պիտ՝
՝լամ:

Ա՛լ տէրտէր էղայ՝ փիլոն կը հագնիմ,
Ծեռքըս կ՛առնում, խաչ ու աւետարան,

Տրղայ ու մեռել կ՚առնում, կը խօթիմ՝
Մէկին աւազան, մէկին գերեզման:

Ի՞նչ հօրըս ցաւն է մարդ փրսակել,
Տունօրթնէնք քալել տարին երկու ժում,
Եւ խոստովանցնել, եւ հաղորդել,
Եւ փարատել տրղոցկանի տուն:

Ի՛նչ կ՚ուզիք՝ ասէք, տէրտէր ըլլալէն
Քեարըլ զէնխաթ աշխարհքըս չի կայ.
Տայմա մարդ ազատ է միւնկիւզ լալէն,
Ամա ըստակը մէկ-ծարէն կու գայ:

Օխտը փոր, օխտը ճէպ տուն ունեցիր՝
Ու փխթուն տարին թաղէ ու կընքէ.
Փորըտ կրակէ հաց, ստակը ճէպըտ տիր՝
Ատկից ալ թէօյֆէ կեանք մեզի պէտք է:

Սէ-ւէ-ն.

---



# ԵՐԱԶԱՀԱՆ

Հարուստ եւ գեղեցիկ, զոր ասացեալ է

## ԴԱՆԻԵԼԻ ՄԱՐԳԱՐԷԻ

Վասն պէսպէս պատահանաց.

## Ա.

Աստուած տեսանելն յերազի լաւ է տեսնողին, և յամէն չարէ ազատի, թէ աղքատ է, հարստանայ. թէ հիւանդ է, ողջանայ: Աստուած ի տան քում տեսանել նորոգութիւն է:

Աստղ—Լաւ է: Աստղ չիւր տանն—Իւր տան բարիքն աւելանայ. թէ օտարական լինի՝ խաղաղութեամբ ի տուն երթայ: Աստեղք—Ի ճանանապարհ երթայ և շահի: Աստեղք յերկնից անկեալ—Մեծամեծաց մահ է և կորուստ: Աստղեր առնուլ—Պատիւ է: Աբեղայ—

փառք և պատիւ է, կամ կռիւ: Ագուան ի պատարագ—Բարի է, և կռուոյ նշան է: Ագռաւ—Թշնամիք արձակին ի վերայ քո: Աշտարակ—Մեծութիւն և բարձրութիւն է: Աթոռ նստիլն բարձրութիւն է: Ամփոր գինիքն տեսանելն հարստութիւն է: Ալիւրն շահ է և ույժ: Ալիւր ամանոյն բուզակ է: Ախորժն աղջիկ է, կնիկ և աւետիս: Ապարանն շնորհք է: Ապուխտն ան է և երկիւղ: Աղուէսն թէ որսաս, զթշնամիդ յաղթես: Աղուէսն թէ ի մարդոյն փախչի, իւր պարտականն չիւրմէ փախչի: Աղուեսի հետ թէ կռիւ անէ, հետ իւր կարևորին կռիւ անէ: Աղջիկ իւր ծոցն խնդութիւն է: Աղջիկ փոքր՝ շատ շահ է: Աղբերակն իրաց շահ նշանակէ: Աղբիւրն լուացուիլ—Ճահ է: Աղբերէ ջուր առնուլ վատ է: Աղբերէ ջուր խմելն շնորհք է: Աղաւնի և Անտառն անոյշ խօսք է և բարի: Աղտ—Կսկիծ է: Աղ սպիտակ դրամ է և շահ: Աղ սև տեսանես՝ վատ խօսք է և տրտմութիւն: Աղ կոտրած—Կռիւ խափանի: Աղի Ջուրն կսկիծ է և հոգս: Աղմուկն շատ գրոյց է և ճօշք: Աղեղնաւոր



գինիքն տեսանել, թշնամի և լեզու է: Ամբար հանելն տան շինութիւն է և լաւ: Ամուսին իւր շնորհելն շահ է և բարի: Ամէն հալաւն ուրախութիւն է և շնորհք: Ամանն առնելն և պահելն բղորդութիւն է: Ամբարտաւան զօք վնաս է խիստ: Արմաւն շատ բարի է և անոյշ խօսք: Այգին և Բօստանն ճանապարհ գուցանէ: Այրեցեալ հանդերձն վնաս մահու է և երկիւղ: Այրեալ և աւերեալ տեսանել զտունն իւր վնաս է: Անձրևն ժամանակ բարի է: Անօթութիւն փաստակ է: Անոյշ ուտելիքն լաւ է: Անուշահոտ իրքն լաւ է: Անկանիլ ի գետն թօթափի յընչիցն և աղքատանայ: Աչքն գանձի շատութիւն է: Աչք բազում հարստութիւն է: Այս մեծս ունել—Կենաց յաւելումն է: Այս հանել՝ կինն կամ որդին մեռանի: Անպարտութիւն նեղութիւն է և հոգ: Առաջնորդն լաւ է և շահ: Առիւծն թագաւոր է, լերբ, կամ աւագ իշխան և մեծ մարդ: Առիւծք երկուք ընդ միմեանս կռուին—Երկու թագաւոր կամ երկու մեծ մարդիկ կռուին: Առիւծին վերայ նստած լինիս՝ դու ի պարոնու-

թիւն վարիս։ Առիւծն ի դէմդ ելանէ՝ ահ հասանի քեզ ի մեծ մարդոյ։ Առուն ի տան քում—գանձ և շահ է։ Ատամունքդ ամէնն ընկնի—շատ գանձ գտանէ. Ատամն առաջին ընկնի—սգոյ հանդիպի կամ ի ճանապարհ երթայ։ Ատամունս առաջինս հանել որդոց մահ է։ Ատամունս ներքինս հանել—տրտմութիւն է, և թէ վերինս—Ազգական ոք մեռանի։ Ատամունքն սևացեալ—Հիւանդութիւն է։ Արեգակն թագաւոր է։ Արեգակն չիւր ձեռքն տեսանել պարոնութիւն է տեսնողին։ Արեգակն խաւար Այն տեղեաց պարոնին չար գայ։ Արեգակն չերկնից անկեալ—Թագաւորաց մահ է։ Արեգակն ի կողմանէ նեղութիւն է։ Արեգակն ի ներքոյ ամպոյ—Երկրի նեղութիւն է, կամ պայծառութիւն։ Արծաթն նեղութիւն է։ Արմաւենին գաւակ է և ուրախութիւն։ Արիւն հեղուլն վնաս մեծ է։ Արիւն կամ արիւն առնուլն շնորհք է։ Արծիւն աւագ է և մեծ պարոն։ Արծուոյն վերայ նստիս՝ պարոնութեան տիրանաս։ Արծուոյն հետ կռուիս կամ զարնես—հետ մեծ մարդ-



կանց նախանձիս և կռուիս։ Արծիւն զքեզ զարնէ—Ի պարոնէ, զէն հասանի քեզ։ Արջն անիրաւ և անգէտ մարդոյ խօսք է, և ամէն ձէղ գազան թշնամի է։ Աւետարան հալալ մուրատ է։ Աւազան հալալ ռոճիկ է և շահ։ Աւագերէց մեռած կենդանացեալ—Մեծ զրոյց կենդանանայ։ Աւազակ—Զգուշացիր ի կր-ռուոյ։ Աւազ զինքն տեսանել—Բարի է և խիստ լաւ։ Աւագ տեսանես—թշնամի արձակի չերկիրն։ Աւերակ, որ է սուլուխ՝ շատ գանձ է։

## Բ.

Բառնալ և ընկենուլ զինքն չումեքէ —Վնաս մահու է։ Բարձր տեղաց ընկնիլն չէ բարի, վնաս է։ Բարձր տեղեաց վերայ քայլես—Մեծութիւն գտանես։ Բարջառափ և այլ աղաւրա՝ անոյշ խօսք է։ Բորն թաղ կոխե է։ Բաղանիք հոգս է։ Բաղանիք երթաս—Ի պատրանք անկանիս։ Բաղանիսից դուրս գաս—Ի հոգոց ազատիս։ Բաղանիք լուացուիլն—Զար-

չարանօք ռոճիկ է և մեծ նեղութիւն:
Բաղդ մեծ մարդ է: Բաղ շինելն կամ հիմն
արկանելն բարութիւն է: Բահն լեզու է:
Բամբակ արդարութիւն է: Բանջար շահ
է: Բեհեզ ժողովելն լեզուք է: Բերդ—Ի
վերայ թշնամեաց իրաւանաս: Բերդ
մտանելն ամրութիւն է և պարիսպ:
Բերդ աւերելն—Ի նեղութենէ ազատիս:
Բերան լուանալն—Իւր ռոճիկն պա-
կասի: Բիր տեսանես կամ առնուս եղ-
բայր է կամ որդի: Բիր կոտրելն—Եղ-
բայր մեռանի կամ ազգական: Բլուր
տեսանելն երկրի շինութիւն է և խա-
ղաղութիւն: Բոց նեղութիւն է: Բուր-
վառ առնուլն կամ շարժելն չէ աղէկ,
կռիւ է: Բուրդ սպիտակ տեսանես կամ
առնուս—Մեծ առողջութիւն է և շահ:
Բուրդ սև սուգ է և լաց: Բոբիկ զինքն
տեսանել—Ձէն գայ իւրեան: Բորոտ
զինքն տեսանել—Գանձ շատանայ, մե-
ծութիւն և շահ է: Բողկ ուտելն առող-
ջութիւն է և շահ: Բրինձ—Շահ է և բա-
րի: Բրել կամ գործել մեծ բարութիւն է
և շահ:

---



## Գ.

Գառն տեսանել մեծ շահ է: Գա-
ռինս զենելն չէ բարի: Գառինս լուա-
նալ զէն է և տրտմութիւն: Գարուն—
Կռիւ է և երկիւղ առանց վնասու: Գա-
զանի խաղալն թշնամւոյն հաշտութիւն
է: Գազանի փախչիլն խաղաղութիւն է:
Գանձ տեսանել կամ առնուլ շահ է:
Գարի բուզակ է: Գայլ թէ սպանես ըզ-
թշնամիդ յաղթես: Գաւազան—Ամրա-
նաս ընդդէմ թշնամւոյն: Գաւազանն
ի յափին լաւ է, որդի կամ մեծ շահ:
Գաւաթ բռնել զաւակ խնդման է: Գետ
անցանելն հեծնել է: Գետ յստակ հա-
յիլն առատութիւն է: Գետ պղտոր լի-
ութիւն է: Գետ լուացուիլն նեղութիւն
է: Գետին ի վայր երթալն թշնամին
յաղթէ զինքն: Գեղջ տանիլն նեղու-
թիւն է: Գերի զինքն տեսանել մեծու-
թիւն է և շահ: Գերեման որ կոտրի, տա-
նուտէր մեռանի և վնաս է: Գերեզման
բանալն վնաս է: Գեղեցիկ պատկեր
նկարած փառք է: Գէշ հոտ առնուլն
գէշ խօսք է: Գինի անապակ տեսանել

կամ խմել կամ գնելն ուժ է և շահ։
Գինւոյ անոյշ խօսք է։ Գինձ ուտել կամ
ժողովելն կուխ է։ Գինու հագնիլն շահ է
մեծ։ Գինտ հանելն յականչէն վնաս
մահու է։ Գիշերի ի ճանապարհ երթալն
նեղութիւն է։ Գիտաւոր տուող մեծութիւն
է և պատիւ։ Գիրք կարդալն ժողովք
ցուցանէ. իւր մարմնոյն նեղութիւն է
և ցաւ։ Գիր գրելն բարի և հալալ մու-
րատ է։ Գլխատեալ զինքն տեսանել վնաս
մահու է։ Գլուխ կտրած ի ձեռքն առ-
նուլ շատ գանձ գտանէ։ Գլուխն դեղ
քսելն անոյշ խօսք է։ Գլուխ ածիլես,
յամէն նեղութենէ ազատիս։ Գլուխ այ-
լոց ածիլելն ի ցաւոց դժուար զերծանի։
Գլուխ լուանալ կամ գլխաւոր՝ զէն ցու-
ցանէ։ Գլուխ սպիտակն յանկարծ շահ
է։ Գլխոր ցնորք և աղքատութիւն է։
Գնդի խաղալն պարոնին լաւ է. փոքր
մարդոյ գէշ է։ Գոմէշ շահ է և ուրա-
խութիւն։ Գոմէշ ի գետն բարի զրոյց
գայ իւրեան։ Գոմ շինելն շահ է և ու-
րախութիւն։ Գոյնզգոյն հագուստ խնդու-
թիւն է։ Գորտի ձայն լսելն խնդութեան
զրոյց գայ։ Գորտն թէ սպանանես, հետ



հաւատացեալ մարդոյ հաշտումն առ-
նես։ Գրաւ հագնիլն հարկիք է։ Գրաստա-
չոր հանել ի տանէն վնաս մահու է։
Գրող տեսանել—Մահն մօտեցել է։ Գրքեր
և Կտակարան իրիցուն խելք է կամ ճա-
նապարհ։ Գրչի տետրակ կին է։

## Դ.

Դահեկան յումեքէ ի յինքն առնուլ
և տեսանել շահ է, կամ կին առնու և
տղայք վաստակի։ Դամաս հիւանդութիւն
է։ Դանակ տեսանել կամ գնել չէ լաւ.
վատ լեզուն խափանի։ Դաշտ անու բան
առնես։ Դաշտէն ի դուրս գաս, ի նե-
ղութենէ ազատիս։ Դատաւոր Աստուած
է և պարոնութիւն աւելանայ։ Դատաս-
տանի մեղաց քննութիւն է։ Դարպաս
շինելն կամ տեսանելն հարուստ կին է։
Դարպաս լայնացնել պարոնութիւն է։
Դարպաս փակելն մեծ մարդ անկանի։
Դարբին մեծ մարդ է։ Դարբնութիւնն
թէ ինքն առնու, լաւ տանուտէր լինի։
Դարբնի սարուածն, զինչ որ լինի, ա-
մէնն բարի է։ Դեղին ամենաին վատ

է և հիւանդութիւն: Դև նեղութիւն և մեղաց նշան է: Դդում ցանելն ջերմ է, և ուտելն հիւանդութիւն: Դի գրոյց բարւոյ է: Դիպակ տեսանել կամ ագանել մեծ պատիւ է: Դեղձ տ. կամ ուտելն հիւանդութիւն է: Դիւան պատիւ է և հետ մեծ մարդոյ ծանօթանալ: Դուռ բանալն իւր բաղտն բացուի և իւր կամքն կատարի: Դուռ ձգելն մեծ մարդ անկանի, և կործանումն է: Դուռ կոտրելն մահու նշան է: Դուռն ելանելն չէ բարի: Դուր պատիւ է: Դրամ տ. կամ ժողովել ագահութիւն է: Դրացոյն բարև տալն կռիւ է:

## Ե.

Եզն—Ակն գնալ: Եզն նստման մեծ աւետիս գալ կամ զուգակից սիրելի: Եզին միս ուտելն աղէկ է. ոմանք ասեն թէ նեղութիւն է: Եզանց կռուելն թշնամի է: Եզն մորթել վնաս մահու է: Եղեւնեայ տ. կամ շինելն փառք է: Եղ ուտելն բարի է: Եղբօրն ի տան տ. սիրելի գալ իւրն: Եղջերուան երկրի նեղութիւն է: Երփեհոան տրտմութիւն է: Երկիրն խնդութիւն է: Երկանք տ. կամ աղալն անհանգստութիւն է: Երէշն տ. կամ գնել տրտմութիւն է և յոյժ վատ: Երաշ առնուլն սրբութիւն է: Երակ կտրելն վնաս մահու է: Երես [illegible] զէն է: Երես կարմիր՝ բանն աղէկ լինի: Երես դեղին մեղք է: Երես աղէկ մեծ փառք է:



## Զ.

Զանգակի ձայն լսել, խնդում է և ուրախութիւն: Զաֆրան հիւանդութիւն է: Զաֆրանով կերակուրն լաւ է: Զենեղն մեծ նեղութիւն է: Զինուոր—Տրտմութիւն է: Զմրուխտն լաւ է: Զոհարն մեծ հոգս է և սուգ: Զուռնան կամ զձայնն լսել, անձրև է, կամ կռիւ: Զրոյց տալն նեղութիւն, չարութիւն է: Զրահն սպանութիւն է: Զրահ հագնիլն զէն է:

## Է.

Էրէց [illegible]—Մեծ գրոյց խափանի: Էրէց ի մեռելոց յառնել—Հին խօսք ի

գրոյց գայ: Իշ ջաղաց՝ նեղութիւն է: Իշ ճերմակ կամ բարձեալ և հեծեալ—Բարի է և պատիւ:

Ը.

Ընդ իշխանն խօսիլ—Բարի է և յանկարծ շնորհք: Ընդ այլ ումեմն մարդոյ խօսիլն շահ է և փառք: Ընդ այլ կնոջ խօսիլ տրտմութիւն է: Ընդ կուսի հաց ուտելն բարի է: Ընդ խաղաղ գետ անցանելն չէ աղէկ: Ընտանիք հիւանդ վնաս է: Ըղունկ ունենալ աղքատութիւն է: Ընկոյզ ժողովելն չէ աղէկ: Ըմպելի խմելն ուրախութիւն է:

Թ.

Թագաւոր ողջունելն փառք է: Թախտ մեծութիւն է: Թախտ կանաչ—Ցաւ է: Թամբաւորել իրաւարար է: Թանաք եփել լաւ է: Թանաք ի վերուստ վոլթես—Գէշ խօսք է: Թարախով զինքն տեսանել շահ է և հարստութիւն: Թաշկինակ զինքն տ. բարի է: Թեւաւոր զինքն տ. հոգւոց



դիպի: Թթու մածուն ուտելն հառամ ուծնիկ է: Թխկի ծառն հարուստ մարդ է: Թիթեր զինչևիցէ՝ նեղութիւն է: Թուզ ծառն լիրբ մարդ է: Թուզ դալար տ. կամ ուտելն վնաս է: Թուզ չոր ուտելն շահ է: Թուխ զինքն տ. մեծութիւն է անձին: Թռչել—Յայլ տեղ երթայ: Թէ յիւր կտուրէն յայլ կտուր թռչի, նա այլ կին առնու: Թէ թռչի որ բարձրանայ, ի լաւութիւն հասանի: Թէ թռչունն յանձն քո մերձենայ, մարդ երանէ զքեզ: Թռչուն արձակելն մեծ բարութիւն է: Թռչուն փախչիլն մեծ վնաս է: Թռչնոց կոչելն վնաս է: Թռչունն թէ խաղայ ընդ քեզ, քո թշնամիքն սիրեն զքեզ:

Ժ.

Ժամկոչն զարթուցած տ.—Արքայութեան արժանի լինիս: Ժամ երթալն կեանքն բարի լինի: Ժամատուն աղօթելն լաւ բան առնել է: Ժամանակ՝ դպրութեան հասանիս կամ նեղութիւն է: Ժուռ-գալն ոչ է լաւ: Ժամացոյց օգուտ է:

## Ի.

Ի մանկութեան զինքն աւեոր տեսանել կենաց յաւելումն է: Ի յալեւորութեան զինքն մանուկ տեսանել նոյն է: Ի ծովակի նստիլ զուարթութիւն է անձին: Ի ծառ նստիլն պատիւ է: Ի բարձր տեղւոջ նստիլ պատիւ առնու յաւագաց: Ի յանապատի նստիլ նեղութիւն է: Ի ձի ճերմակ նստիլ կամ ի սեւ պատիւ է և բարի: Ի ձի վազան նստիլն խիստ աղէկ է: Ի ձի գնացող նստիլ շահ է: Ի սեւ ջորի և ձի նստիլն ի մեծամեծաց շահ հասանէ: Ի գոյլ նստիլ նեղութիւն է: Ի գահ նստիլ մեծ պատիւ է: Ի ցեխ նստիլն շատ նեղութիւն է: Ի բարձր տեղւոջէ անկանիլ—Ի փառաց անկանի: 'Ի լուծս գնել զեղլնս—զրոյց է: Ի օձերմանիս ձեռն արկանել կամ վարել բարի է: Ի ջրհոր կամ ի գետն անկանիլ—Ի նեղութիւն անկանի: Ի ջրհորէ, ի գետէ կամ ի ծովէ ելանելն պատիւ է և ազատութիւն. չելանելն վնաս է մեծ: Իբրեւ խաչ առնելն տրտմութիւն է: Ի գերեզման զինքն տեսանել—Դատաստանաց հանդիպի և բանտի: Ի մեռելոց պագ առնուլն զէն է և վնաս: Ի թուչման զինքն տեսանել՝ յայլ երկիր վարի և մեծութեան հանդիպի: Ի վայրի գազանէ հալածիլ՝ թշնամի յաղթէ քեզ:



## Լ.

Լոյսն աշխարհի խաղաղութիւն է: Լոյս շիջեալ տրտմութիւն է առաջնորդաց: Լուսին և արեգակն յայգին—Վնաս է ազգին: Լուսնի տաշտ խիստ շահ է: Լուսինն կարմիր վնաս է: Լուսինն խաւար—Թագաւորի մահ է: Լուսինք երկու թագաւորք յառնեն ի վերայ միմեանց: Լուռ ուճիկ է: Լուծ գնելն վատ է: Լուծք եղանց բարի է: Լեառն բարձր—Տրտմութենէ ազատիս: Լեռնեղն հարուստ կնիկ է: Լիմոնն անոյշ խօսք է:

## Խ.

Խաչաձեւել զինքն—Մեծ պատուոյ նշան է: Խաչն չարչարանք է: Խաւարն նեղու-

թիւն է։ Խաւարն հիւանդութիւն է։ Խաղողն անձրև է և ցնորք։ Խաղող սպիտակ խնդումն է։ Խաղող սև լաց է։ Խաղող ժողոված գանձ է։ Խայթ հանելոյ աւագ մեռանի։ Խարփուզն—Աղէկ է, բայց ուտելն հիւանդութիւն է։ Խեցեղէն աման ունելն ուրախութիւն է։ Խմոր ուտելն շահ է։ Խնդալն չէ աղէկ։ Խնձորն տղայ է, և ուտելն շահ։ Խնձոր առնուլն աւետիս է։ Խնձորի ծառն մեծ մարդ է։ Խոտն և հոտերն շահ է։ Խունկ ծխելն ինչք և ապրանք է և անոյշ խօսք։ Խորոված միս ուտելն շահ է։ Խոզ մեծ-մահ է կամ այլազգի։ Խոզի միս ուտելն ազգականաց մահ է։ Խոտն լաւ մարդ է։ Խոտ ժողովելն պատիւ է և փառք։

## Ծ.

Ծաղկեալ անդաստան շահ է, և ուրախութիւն։ Ծաղիկն անհոգութիւն է։ Ծաղիկ քաղելն—Կին առնու։ Ծաղկիլն բարի է։ Ծաղկած ծառն նոյն է։ Ծառ տնկելն բարի է։ Ծառ պտղով բարի է։ Ծառ կտրել կամ այրել վնաս է։



Ծառն թէ ծուխ լինի, չէ լաւ։ Ծառին տերևն թափի—Արիւնհեղութիւն է։ Ծառ անկանիլ մարդոյ մահ է։ Ծառ մեծ խլել—Յաւագաց ումն անկանի։ Ծառի վերայ նստիլն փառք է։ Ծառի վերայ գնալն նոյն է։ Ծառ կանաչ գանձ է։ Ծառ չոր տրտմութիւն է, վատ մարդ և չարակամ է քեզ։ Ծառ զուգելն կին է։ Ծամ կտրելն բաժանումն է։ Ծառայն աւետիք է և խնդութիւն։ Ծարաւելն չէ բարի։ Ծանր շալակելն մեծ մեղք է։ Ծիծաղելն տրտմութիւն է։ Ծիծն տղայ է կամ մեծութիւն։ Ծնանիլ կնոջն մեծ շահ գայ։ Ծունր ածելն առ Աստուած յոյս է։ Ծով պղտոր նեղութիւն է։ Ծով ցամաք լիութիւն է աշխարհի։ Ծովն լուացուիլն շահ է։ Ծովն ի ներս երթաս—Ի վերայ թշնամեաց իրաւանաս։ Ծովն զմարդն ի ներքս քաշէ—Տեսնողն գողի ձեռօք սպանուի։

## Կ.

Կարմրանոջ շինելն յոյժ լաւ է։ Կայծակն

խռովութիւն է։ Կոչնակն երկրի նեղութիւն է։ Կորուսն նեղութիւն է։ Կամրջի տակ հանելն վնաս է։ Կենդանի զինքն ի գերեզմանի տեսանելն մեծ զրոյց է։ Կին տանողն վնաս մահու է։ Կին հերարձակ նոյն է։ Կին գեղեցիկ և զարդարած երկիր է կամ քաղաք։ Կնոջ հեր կտրելն յոյժ վնաս է։ Կոյս զինքն տեսանելն խիստ շահ է։ Կուժն որդի է։ Կուժն ջրով բարի է ամենևին։ Կորեկ տ. կամ ուտել լիութիւն է։ Կրակ անկանիլն մահ է և սով։ Կտաւ հանել չէ բարի։ Կոշիկ տ. կամ ագանել ճանապարհ է։

## Հ.

Հայ—Բարի է և լաւ։ Հաւ սիրամարգ մեծ իշխան է։ Հաւ ի ձուի վերայ յանկարծ շնորհք է։ Հաւի խօսիլն մարդ ի կենաց անկանի։ Հաղորդ առնուլն ծեծ է մարդոյն։ Հաց քաղելն ուրախութիւն է։ Հարսանիքն տրտմութիւն է։ Հայրապետն մեծ զրոյց է։ Հայրն մեռած կենդանացեալ մեծ շահ է։ Հալաւն այրած



շահի ի կնոջէ։ Հանդերձն հեծել է և թշնամի։ Հանդերձ կորուսանելն վնաս է։ Հանդերձ գոյնզգոյն ունել նոյն է։ Հեծաւոր զինքն տեսանել կամ գայլ ոք շատ շահ է և բարի։ Հինն տանել հարստութիւն է։ Հիւանդն նեղութիւն է։ Հող բառնալ նոյն է։ Հում միս ուտելն մեծ զրոյց է։ Հոր փորելն յոյժ նեղութիւն է։

## Ձ.

Ձիւն լուանալն բարի է։ Ձիւն ձորոց որդի լինի։ Ձէթ եփելն մուրազ է և լաւ։ Ձու տ. կամ ժողովել կռիւ է։ Ձոր տ. կամ անցանելն—ի նեղութենէ ազատիս։ Ձուկն ի ջրէն հանել—Ամպ լինի կամ ձիւն և կամ ջերմ։ Ձուկն ի կրակին երկրի նեղութիւն է։ Ձուկն չար լեզու է։

## Ղ.

Ղան կամ սուլթան անչափ աղէկ է։ Ղամպար վառելն բարի է։

## Ճ·

Ճանապարհ երթալն և յետ դառնալն բարի է։ Ճոպան կամ ճուան երկայն ճանապարհ է։ Ճառ գրոց տ. և լսել—Հոգս է։ Ճնճղուկ տ. կամ ունել բարի է։ Ճըրագ վառեալ—Ծածուկ գործ յայտնին։ Ճրագ անցեալ—Կործանումն է տան։

## Մ·

Մատանի—Իշխանութիւն է։ Մատանի կոտրած վնաս է։ Մատանի կորուսանել—Կին կամ սիրելին մեռանի։ Մատանի երկու ունելն—Երկու կին առնու։ Մատանի արծաթի—Ի նեղութենէ ազատի։ Մատաղ յուղայ նստելն հիւանդութիւն է։ Մարգարիտ մեծութեան նշան է։ Մարդոյ ճարպ ուտել գանձ գտանէ։ Մարդոյ ոսկր ուտել—Ի բանտ մտանէ։ Մեծահասակ զինքն տ.—Փառք է։ Մեծ փիլիսոփայ ուսումն արկեալ մեծ շնորհ է։ Մեռած զինքն տ. շատ ապրի։ Մեռելն թէ խօսի, զգոյշ լեր, մի հաւատար։ Մեռել թաղելն շփոթումն է։ Մեռել ի



գերեզմանի—Խափանի չարն։ Մեղու բազում—Արձակին թշնամիք։ Մեղր ուտելն մեղք է և սրտնեղանք։ Միրգ ու- կամ ուտել հիւանդութիւն է։ Մոմ վառած ուրախութեան նոյն է։ Մորեխն հոգս է և աշխատութիւն է և որդի։ Մուկն և մուկին վրխարհի նեղութիւն։ Մօրուօք զինքն տ.—Ըրնաս է և չար։ Մօրուօք ... շնորհք է։

## Յ·

Յաթոռ նստելն բարձրութիւն է։ Յաւազան ձեռն արկանելն—Ի մեծ մարդոյ իրք առնուս։ Յաղբերէ ջուր խմելն բարի է։ Յամպոց ճայթմունս լսելն չէ բարի։ Յորջէ հալածիլ—Ի կռուոյ ազատիս կամ յաւագէ պատրաստ կաց։ Յեկեղեցի երթալ—Ի ծանրութենէ ազատիս։ Յերկինս եղանել մեծ պատիւ է։ Յերագի երթալն պատմելն յոյժ լաւ է։ Յոյր երթալն բարի է։

## Ն.

Նախճիր որ ի գիւղն գնայ—Աւագ է: Նապաստակ ունենայ—Իւր նման տղայ լինի: Նաւորդ լինելն—Զրոյց ելանէ: Նաւ ոսկւոյ կամ արծաթի—Բարի է: Նաւ նստիլ—Շատ ժամանակ ապրի: Նաւ երամով—Ի հեռաստանէ շահ գայ: Նաւ գանձով—Նեղութիւն է: Նաւ այրելն երկրի խռովութիւն է: Նաւ կոտրած մահու նշան է: Նոր ելք տեսանել—Յօտարութիւն երթայ: Նուռն յօտարաց շահ է:

## Ճ.

Ճրագ սպիտակ տ. կամ ագանել արգարութիւն է. սեւն տրտմութիւն է. աղտոտն մեղք է: Ճրագ շինելն բարութիւն է և քակելն վնաս: Ճերմակ խմելն խելաց յաւելումն է: Ճիշ իւղով ռոճիկ է և շահ: Ճրագն փառք է: Ճուռնք ընդ իրար կռուին—Չէ աղէկ: Ճուանն հաջէ կամ խածանէ,—Լեզու է, և ի չար մարդէ պատրաստ կայ:



## Ո.

Ոսկի խնծոր—Պատիւ է: Ոսկին կամ արծաթն շահ է: Ոչխար—Ձմեռն է և ցուրտ: Ոչխար սև սուգ է և տրտմութիւն: Ոչխար ի ճանապարհի հարստութիւն է: Ոսպ—Պարոն է: Ուղտք երկու կռուին—Իշխանք կռուին:

## Չ.

Չամիչ յոյժ վնաս է: Չամաղն կռիւ է և աղաղակ: Չանչն տրտմութիւն է: Չիրն սակաւ—Շահ է: Չուխայ կանանց հարստութիւն է: Չուխայ սև տրտմութիւն է:

## Պ.

Պատարագ—Կռիւ է: Պարտէզ—Բարի է: Պարտէզ գործելն բարի է: Պղպեղն կրսկիծ է: Պղպեղ ուտես—Թշնամեաց պատրաստ կայ: Պատուհանն յոյժ լաւ է, ոմանք ասեն թէ կռիւ է: Պատ արծաթի հիւանդութիւն է: Պսակ ի փշոյ

մեծ շահ է: Պսակ քարեղէն մեծութիւն է:

## Ջ.

Ջաղաց շինելն մեծութիւն է, և աւերելն՝ շինութիւն: Ջաղացի աղունն հիւանդութիւն է: Ջայլամ—Ի նեղութենէ ազատիս: Ջուր սուրբ ըմպելն խիստ լաւ է: Ջուր ի տան քում—Չէ աղէկ: Ջուր պղտոր տ. կամ ըմպել—Տրտմութիւն է: Ջուր ի գնացման—Բարի է: Ջուր ի գետէ առնուլն վնաս է. իսկ յաղբերէ առնուլն բարի է:

## Ռ.

Ռեհան ծաղիկն բարի է: Ռումբ կանգնած—Մեծութիւն է և պատիւ: Ռումբ ի ձեռին ունիլ ճանապարհ է և երկիր: Ռուս մեծ հակառակութիւն է:

## Ս.

Սահ—Մեծ մարդ է: Սալորն առողջու-



թիւն է: Սամիթ գալար շատ լաւ է: Սամիթ չոր—Չէ լաւ: Սանդուղ կանգնած մեծութիւն է: Սանդր ածելն զէն է: Սարօճ ջրէ կամ ձի—Մեծութեան հասանիս: Սենեակ քակելն—Ի կնոջէ բաժանիլ: Սեխն—Բարի է: Սիսեռն նեղութիւն և կռիւ է: Սխտորն, Սոխն և Սողոխն կսկիծ են: Սոխ և Սահ ուտելն հիւանդութիւն է: Սունկն ուրախութիւն է:

## Վ.

Վախեալ կամ փառեալ զինքն տեսանել—Հարստութիւն է: Վանք և աբեղայ—Նեղութեան ամբոխ է: Վառած զոք տ. վնաս է: Վարդ—Կին առնու: Վարդ քաղելն բարի է: Վիշապն—Աւագ է, կամ նեղութիւն:

## Տ.

Տաճար զարդարած բարի է: Տաճար այրելն խռովութիւն է թշնամեաց: Տաճիկն—Արձակումն է թշնամեաց: Տախտ դիպակով բարի է: Տանձ ուտելն հիւան-

գութիւն է։ Տառեխն ճանապարհ է։ Տէնչն և տէնչքն տրտմութիւն է։ Տղայ ի գիրկն առնուլ ցաւ է և հիւանդութիւն։ Տուն շինելն յոյժ բարի է։ Տունն աւերել չէ բարի։ Տուն իւր կամ զայլոցն աւերած տեսնելն չէ լաւ. անխրատութիւն է։

## Ց.

Ցեխն վնաս է և տրտմութիւն։ Ցեղն լեզու է։ Ցիլն չար լեզու է։ Ցից հանելն նեղութիւն է կամ լաւ է։ Ցորեանն ցընորք է։ Ցուլ բռնելն աղէկ է։

## Փ.

Փայտ—Յոյժ բարի է։ Փոխինդ ուտելն չէն է։ Փող հարկանելն մեծութիւն է, և բախտի տիրանալ։ Փուշ հատանելն թշնամեաց կորուստ է։ Փոքր մարդ—Շնորհք է։

## Ք.

Քաղաք մտանել բարի է։ Քաղցր եր…



ուտելն չէ լաւ։ Քար ձգելն վնաս է։ Քարինս ժողովելն լեզու է։ Քար ի հիմն ձգել—թշնամի է։ Քարի վերայ նստիլն մտածմունք է։ Քացախ խմելն—խափանի չարն։ Քղամիդ հագնիլն խնդութիւն է։

## Օ.

Օձն թէ հետ իւր խօսի—Այնպիսի բան առնէ, որ աշխարհ ամենայն զարմանայ։ Օձն թէ սպանանէ—Զիւր թշնամին յաղթէ։ Օձն թէ ի մահճի տեսնուի—Կին առնու։ Օձն թէ խայթէ—Ի թշնամեաց զէն գայ։ Օձն թէ յիւր վերայ արձակի—Ի թշնամեաց ահ գայ։ Օձն թէ ի փորն մտնու—Ի թշնամեաց չար խօսք լսէ։ Օձն թէ ի վերայ անկողնոյն սպանանէ—Իւր կինն մեռանի։ Օձն թէ տեսնու և չվախէ—Ի թշնամեաց անհոգանայ։ Օձն թէ յիւր տան մէջն տեսնու—Իւր կինն հետ իւր թշնամանայ։ Օձն թէ երկու կտոր առնէ—Յիւր թշնամւոյն իւրեան շահ գայ։ Օշինդր տեսանել կամ խմել—Կռիւ է։

## ԼՈՒՍՆԻԻ ԵՐԱԶԱՑՈՅՑ

### ԼՈՒՍՆԻ

—1,3,5,9,13,18,19,22,26, 30 օրն—Երազն ի բարին կատարի:

—2, 10, 12, 16, 28—Երազն երեք օրն կատարի:

—8—Երազն ութ օրն կատարի:

—23—Երազն չերեսուն օրն կատարի:

—14—Երազն քառասուն օրն կատարի:

—11, 15, 17—Երազն չորն կատարի:

—6—Երազն ի տարին կատարի:

—29—Երազն լաւ է:

—4,7,20,21,24,25,27—Երազն սուտ է:

---

Հասցէն.—Въ Тифлисъ. На Авлабарѣ, Константиновская улица, домъ № 3.—Учителю Ованнесу Назарянцъ.

---

## ՉՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ՀԱՅԿԱՅ

...ցի Փրկչական ու Նոր Հայկական ...ականներից՝ կայ և մի շրջան, որ ... էին անում թէ աստեղաբաշխ-...ր և թէ հին ազգերից եգիպտացիք ...այք: Այդ շրջանը ըստ աստեղա-...խից կոչւում է, շրջան Շնչեան, ըստ ...յտացոց՝ շրջան Սոթէական և ըստ ...շրջան Հայկեան:

...շրջանը ավելադրնային (երբ նա-... 1460 կամ (երբ հասարակ է) 1461 ...ների գումարն է: 1460 կամ 1461 ...րուայ ընթացք է, հարկաւոր՝ որ ա-...վելադրնային ու Հայկայ շրջանի տարե-...լուխները հանդիպեն ու միաւորուեն ...ց առաջին ամսուայ առաջին օրը, ...է. Յունուար համարւի այդ առաջին ...միսը, թէ Նաւասարդ և թէ Արեգ:—...ին ազգերից շատ ուսումնականներին էր ...յտնի այս շրջանը և նորա ամենքի ...որ էլ միաժամանակ չէր սկսւում: ...ակ մեր Ա. Շրջանը, որ և Հայկայ ...ականի սկիզբն է, հաստատուած է, ...կչական թուականից 2492 տարի ա-

ռաջ, համաձայն Յայսմաւուրքի՝
Լաստրդի ամսամտին, չորեքշաբթի
որ ըստ Յուլեան տումարի Օգոստ
11-ն է, իսկ ըստ Գրիգորեան այժմ
՛Նոր տումարի՝ նոյն ամսուայ 23-ը
Հայկայ Բ. Շրջանը, որ սկսու
Ն. Ք. Քրիստոս 1032 թուակա
(2492—1460 ‘ 1032), երկուշաբթի
լրացել է Փրկչական 428 թուակա
(1460—1032 428), ուրբաթ. օրը,
տարի որ վերջ գրուեցաւ մեր Արշա
նեանց միահեծան թագաւորութեան
Գ. Շրջանը, որ սկսուել է նոյն թ
կանի տարեգլխի շաբաթ օրը, աւ
ւում է Ներկայ 1888 թուակա
(428+1460 188
Շրջանը Օգոստ
Իսկ այս Նոր
կ՛աւարտուի Փ
նին (1888+1
օրը, և կը սկս
Մխիթարեան Ս

059
Ն-14

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊԷԿ։

10-ով առնողին—12 կոպէկ։
200-ով առնողին—10 կոպէկ։

6723

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0033445